

Ծանօթանանք «Րաֆֆի» միութեան հետ

«Րաֆֆի»-ն իրանահայ այն միութիւններից է, որ իրօք վիթխարի աշխատանք է տանում: Նրա դերը մանա-
լանդ իրանահայ մարզանքի զարգացման մէջ անժխտելի է: Մի թռուցիկ հայեացք նետելով մեր հանրայայտ
մարզիկների ցանկին կը տեսնենք, որ նրանցից շատերը «Րաֆֆի»-ի սաներն են եղել: «Րաֆֆի»-ի նման հսկայ
մի համալիրի ղեկավարելը իսկապէս մեծ ուժ ու էներգիա է պահանջում:

Հայ մարզամշակութային «Րաֆֆի» միութիւնը հիմնել է 1979 թ. ժողովրդի ջանքերով: Սկզբում կառուցել է
միայն Ֆուտբոլի դաշտը, սակայն հետագայում այն վերածել է համալիրի: Համալիրը կառուցել է 6000 քմ.
վրայ, որից 2000 մետրը յատկացել է դահլիճի ու նրա հարակից շինութիւններին, եւ 4000 քմ. Ֆուտբոլի
դաշտին: Համալիրը աշխատում է երկու ասպարէզում՝ մարզական եւ մշակութային:

Աւելի լայն տեղեկութիւններ հաղորդելու նպատակով հարցազրոյց ունեցանք համալիրի նախագահ պրն.
Պետրոս Աբգարեանի եւ վարչութեան անդամ պրն. Ժիրայր Մովսիսեանի հետ, որը ստորեւ ներկայացնում ենք
յարգելի ընթերցողներին:

Խմբ.

**Նախ քացատրէք «Րաֆֆի» մարզամշակութային համալիրը ո՞ր
թաւանին եւ ի՞նչ նպատակով է հիմնել:**

Պետրոս Աբգարեան- Պատահական չէ, որ մեր քաղաքամասում կառուցել
է «Րաֆֆի» մարզահամալիրը: Համարեա 50 տարի սրանից առաջ այս հայա-
բնակ քաղաքամասում մեր երիտասարդները ամենուրեք թափառում եւ որո-
նում էին վայրեր՝ մարզելու համար: Այդ թափառական վիճակից դուրս գալու
համար, ստեղծեց «Րաֆֆի» մարզադաշտի ստեղծման գաղափարը: Եւ դա
գուգադիպեց Իրանի Իսլամական Յեղափոխութեանը: Այդ եռուզեռի
ժամանակ փնտրտութիւնների հետեւանքով հանդիպեցինք մի հողամասի, որը
նախապէս նկատի էր առնել մի հաւաքուծարան կառուցելու համար: Մեր
երիտասարդները շնորհիւ այդ հողամասի վրայ նախ հիմնեց մի Ֆուտբոլի
դաշտ, իսկ հետագայում այդ երիտասարդները, որոնք առաւել հասունացել եւ
հոգատար էին դարձել, մտածեցին պէտք է աշխատանքը ընդլայնել եւ
Ֆուտբոլի դաշտի կող-քին ստեղծել նաեւ այլ կառոյցներ: Իհարկէ նկատի է առնել ժողովրդի արդարացի եւ բնական
պահանջները: Այդ նպատակը իրագործելու համար ստեղծեց մի յանձնախումբ եւ անցաւ գործի: Թերեւս
յաջողութեան հիմնական պատճառը համայն ժողովրդի մասնակցութիւնն էր: Այստեղ ժողովրդականութիւնն էր տիրում:
Ժողովուրդը մասնակցում էր տարբեր ձեւերով: Մի մասը շինարարական աշխատանքին էր մասնակցում եւ իր
մասնագիտութեան գծով ծառայում նպատակին: Մի ուրիշ մասը միութեան օժանդակութիւն էր ցուցաբերում: Մի մասը
ստեղծած դժարութիւններին էր հարթում եւ ... Մի խօսքով «Րաֆֆին» կառուցեց քաղաքամասի ժողովրդի ուժերով:



«Րաֆֆի» համալիրի նախագահ
Պետրոս Աբգարեանը գրոյցի պահին

**Պիտիւնը կոչում է հայ հանճարեղ վիպասան Րաֆֆիի անունով: Դա չի կարող պատահական լինել: Բացատրէք
«Րաֆֆի» անունը ընտրելու մասին:**

Պետրոս Աբգարեան- «Րաֆֆի» համալիրի ուղեգիծը հէնց այն է՝ ինչ մեր մեծ վիպասանն է ժառանգ թողել մեզ
«իմքը ժողովուրդն է»: Ձեռք բերած յաջողութիւնը մեր ժողովրդի կամաւոր մասնակցութեան արգասիքն է: Հիմ-
նաւորաւ գործը մնայուն կը լինի: Յենւելով ժողովրդի վրայ, մենք մեր միջավայրում միշտ եռանդ ենք տեսնում: Կար-
ծես միշտ գարուն լինի:

Ժիրայր Մովսիսեան- Վիպասան Րաֆֆիի գաղափարները յեղափոխական էին, համամարդկային, ազգասիրա-
կան եւ դա շատ հոգեհարազատ է մեր սերունդին: Րաֆֆին ժողովրդական գրող է եւ հէնց այդ պատճառով էլ որեւէ մէ-
կին առիթ չի տրուում նրա գաղափարներին կուսակցական եւ խմբակցական գունաւորում տալ: «Րաֆֆի» միութիւնը
ելնելով իր անկողմնակալ ուղեգծից՝ առիթ է տւել ազատ մտածելու եւ արտայայտելու: Հէնց այդ պատճառով էլ մենք
«Րաֆֆի» միութիւնը համարում ենք յեղափոխութեան ծնունդ: Ճիշտ է մենք մեզ հեռու ենք պահել կուսակցական ու
խմբակցային վեճերից եւ չենք մտել նմանատիպ պայքարների մէջ, բայց դա չի նշանակում, որ մենք հեռու ենք մնացել
ազգային-հասարակական աշխատանքներից: Մեզ յուզել է ազգային խնդիրները եւ միշտ հնարաւոր սահմաններում
մեր լուսնն ենք բերել բարոյութիւններ լուծելու խնդրում:

Համալիրի աշխատանքը ի՞նչ ոլորտներում է:

Պետրոս Աբգարեան- Երբ կառուցեց «Րաֆֆի» մարզադաշտը, կատարեց քացման արարողութիւնը: Ներկայ էին
Թեհրանի ֆիզկուլտուրայի եւ ազգային-կրօնական մարմինների ներկայացուցիչները: Այնուհետեւ միութեան համար
նոր հորիզոն քացեց: Չարգացան միութեան եւ պետական մարմինների փոխարարներութիւնները: Մարզական հանդի-
պումները յաջողում էին մէկը միսին: Առաջին յանձնախումբը, որ պաշտօնապէս կեանքի կոչեց, նրա անդամներն
էին պարոնայք՝ Աշոտ Շահբանդարին, Վարդան Բարախանեանը, Վարդան Բաղումեանը, Յովիկ Ամիրջանեանը, Ռա-
ֆիկ Աղաջանեանը, Վաղո Շահնազարեանը, Ռոբերտ Բաղդասարեանը, Ջանիկ Սիրունեանը, Յակոբ Նազարեանը ,
Արտուշ Մինասեանը, եւ համեստս: Այս յանձնախումբին օժանդակում էին ժողովրդից ընտրուած բազմաթիւ խմբեր: Հէնց
այն առաջին օրից յանձնախումբը նպատակադրել էր զբաղել ժողովրդի եւ մանաւանդ երիտասարդութեան մարզա-

Թեհրանահայ միութիւններ



«Րաֆֆի» համալիրի վարչութեան քարտուղար ժիրայր Մովսիսեանը գրոյցի պահին

կան առողջապահական եւ դաստիարակչական հարցերով: Երկրորդ փուլում պիտի մտածէինք նաեւ մշակութային աշխատանքների մասին: Այժմ աշխատանքները կատարում են երկու բաժնում՝ մարզական եւ մշակութային: Անցեալում մշակու-թային աշխատանքների հնարատրոթիւն չունէինք:

Սրահը կառուցելուց եւ համապատասխան հնարատրոթիւնները ստեղծելուց յետոյ, սկսեցին նաեւ մեր մշակութային աշխատանքները: Մինչ այժմ կազմակերպել ենք ազգային-կրօնական եւ մշակութային բազմաթիւ ձեռնարկներ: Մասնակցել ենք միջմիութենական ձեռնարկներին, որոնց մի մասի նախաձեռնողը եղել ենք մենք: Մշակութային բնագաւառում կապեր ենք հաստատել Հայաստանի տարբեր խմբերի եւ անհատ արեւստագէտների հետ եւ հրաւիրելով նրանց՝ մեր ժողովրդին մասամբ բարարարութիւն ենք պատճառել: Դրանց շարքում կարելի է նշել Հայաստանի Էջմիածին եւ Արտաշատ քաղաքներից ժամանած համատեղ քատերախումբը, որը մեծ բարարարութիւն տուց մեր հանդիսատեսներին: Իրանի Իսլամական Յեղափոխութեան տօնակատարութեան առիթով Հայաստանից եկել էին հանրա-յայտ երգիչներ Յ. Բաղալեան, Ռ. Մատթոսեանը եւ Օ. Համբարձումեանը: Դրանց ելոյթը նոյնպէս մեծ խանդավառութիւն ստեղծեց:

Պետրոս Աբգարեան- Երբ պետութիւնը նկատեց, որ ժողովուրդը համախմբել է միութեան շուրջ, ինքն էս իր աջակցութիւնը ցուցաբերեց: 1996 թականին պրն. Հաշեմիթաբան առաջարկեց մի նախագիծ, որի հիման վրայ մենք կարողացանք

մասնակի օժանդակութիւն ստանալ, եւ ստացած գումարով ծածկեցինք մեր դահլիճի առաստաղը: Մնացած բոլոր աշխատանքները կատարել ենք ժողովրդի յատկացրած նւիրատրոթիւնների շնորհիւ: Ժողովրդի օժանդակութեան շնորհիւ սկզբում կառուցւած Ֆուտբոլի դաշտը վերածեց այսօրայ համալիրին:

Թեհրանահայ բոլոր միութիւնները Ֆինանսական դատարութիւնների դիմաց են կանգնած, դուք էս անշուշտ: Ինչպէ՞ս էք լուծում Ձեր Ֆինանսական հարցերը :

Ժիրայր Մովսիսեան- Մենք թեհրանահայ բոլոր միութիւնների ընդհանուր վիճակը հասկանում ենք, բայց մեր վիճակը իրաւաստուկ է: Մենք պետութիւնից կամ որեւէ կազմակերպութիւնից, ազգային որեւէ մարմնից նւիրական օժանդակութիւն չենք ստանում: Մենք յենւած ենք մեր անդամների եւ ժողովրդի ուժերի վրայ: Բացի ժողովրդի ցուցաբերած օժանդակութիւնը, ըստ մեր ներքին կանոնադրութեան՝ անդամներից գանձում է ամսական մի գումար, որպէս ամսավճար: Խոստանում ենք այսօր, որ մեր նւիրական վիճակը աւելի ծանր է: Եւ քանի որ մենք ազգային իշխանութիւններից որեւէ օգնութիւն չենք ստանում, ուստի պարտաւոր ենք մեր յոյսերը դնել միայն մեր ուժերի վրայ: Միշտ մտածում ենք նոր ծրագրատրոթիւնների մասին: Ամէն օր կանգնած ենք միեւնոյն հարցի դիմաց,- վաղը ի՞նչ պետք է անել:

Կը խնդրենք պատմել «Րաֆֆի» միութեան ձեռքբերումների մասին:

Ժիրայր Մովսիսեան- «Րաֆֆի»-ն աշխատում է դաստիարակել մեր մատաղ սերնդին ճիշտ ուղիով: Այդ առումով հասել ենք որոշակի յաջողութիւնների, սակայն բարատր չենք գտնում: Թաղում կան մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ, որոնք մարզանքով եւ մշակոյթով չեն զբաղում: Ցանկանում ենք միջոցներ փնտրել՝ քարոզչական եւ այլ, որպէսզի նրանց քաշենք այդ աշխատանքների մէջ: Աւելորդ է ասել, թէ ի՞նչ վտանգներ է սպառնում այդ անտարբեր տարրին: Նախաձեռնում ենք աւելի սերտ յարաբերութիւններ ստեղծել միւս հայկական միութիւնների, Իրանի մարզական տարբեր Ֆեդերացիաների եւ մարզա-կրթական պատկան մարմինների հետ: Փորձում ենք, մեր բոլոր կարողութիւններով մասնակցել Իրանում կազմւած համահայկական խաղերին եւ մեր լուծանքները Հայաստանում տեղի ունենալիք համաշխարհային Համահայկական խաղերին: Մենք ինչպէս ասացինք, աշխատում ենք սերտ յարաբերութիւն ունենալ Հայաստանի հետ: Այս հարցում Իրանի պետութիւնը ոչ միայն դէմ չէ, այլ ընդհակառակը արտակարգ պայմաններ է ստեղծում, որպէսզի մեր յաջողութիւնը ապահովւած լինի: Մենք Հայաստանում Իրանի Ֆիզկուլտուրայի ներկայացուցիչն ենք: Մեր սերտ յարաբերութիւնների արդիւնքներից մէկը եղաւ այն, որ Իրան ժամանեց Արտաշատի մարզադպրոցի ըմբշամարտի յայտնի մարզիկ պրն. Ռազմիկը, որի աշխատանքը մեծ ազդեցութիւն թողեց մեր մարզանքի վրայ: Նա Իրանի Օլիմպիական Կոմիտէի կազմակերպած դասընթացներում ներկայացաւ որպէս ըմբշամարտի դասախօս եւ իր փոխանցած գիտելիքներով հիացրեց նոյնիսկ Իրանի ամենայայտնի մասնագէտներին:

Մենք մասնակցում ենք Թեհրանի տարբեր մարզաձեւերի մրցութիւններին՝ Ֆուտբոլ, բասկետբոլ, թեթևատետ եւ այլն, բայց ցաւօք նւիրական բացի բերումով զրկւում ենք որոշ մրցութիւններից: Մենք հպարտութեամբ կարող ենք յիշատակել, որ մանաւանդ այս վերջին տարիներին Իրանում կազմակերպւած համահայկական խաղերում միշտ կանգնել ենք 3 առաջատարների շարքում: Մեր ներդրումն մարզանքում իմ գնահատմամբ շատ բարձր է եղել: Դուք այսօր կարող էք տեսնել մեր դաստիարակած մարզիկներին, որոնք ընդգրկւել են Իրանի տարբեր հաւաքականների մէջ:

Պետրոս Աբգարեան- Այնինչ անում ենք, դա իհարկէ մեր պարտականութիւնն է համարում, իսկ Իրանի մասըլտուրով բարձր մակարդակի խմբեր ունենալու համար պահանջում է հսկայ գումարներ, եւ դա առայժմ մեր հնարատրոթիւններից դուրս է:

Արդեօք «Րաֆֆին» մշակութային ինքնուրոյն խմբեր ունի՞, թէ՞ ոչ:

Ժիրայր Մովսիսեան- Մեր մշակութային բաժինը շատ երիտասարդ է: Մեզ յաջողւել է մինչ այժմ ստեղծել մանկապատանեկան երգչախումբ եւ պարախումբ: Այս նպատակները իրագործելու համար մենք օգտւում ենք մեր սկստուական բաժնի ուժերից: Դրանց կողքին ազգային եւ կրօնական տօների առիթներով կազմակերպել ենք տարբեր ձեռ-

Թեհրանահայ միութիւններ

նարկներ: Իհարկէ մեր ժողովրդի մի մասը ցաօք մշակութային աշխատանքների նկատմամբ անտարբեր է, բայց մենք մեր հնարաւորութիւնների սահմաններում կատարում ենք մեր առաքելութիւնը:

Ինչպէ՞ս կարելի է արտագաղթի տեղափոխութիւնը կանխել:

Ճիրայր Մովսիսեան- Պէտք է նախ պատճառները գտնել: Ինչպէ՞ս բուժել հիւանդին, երբ չգիտես նրա հիւանդութեան պատճառը: Մտք ձեռքեր կան, որոնք ստեղծել են քաջալերում են արտագաղթ: Պէտք է դրանց ճանաչել: Դրան կանխելու համար մեր ազգային իշխանութիւնը որեւէ դրական քայլի չի դիմել: Եթէ եղել են մի չնչին երեւոյթներ, զուտ լոգունգային բնոյթ են ունեցել: Աւելի շատ նրանք են գաղ-թում, ովքեր դատարկ հայրենասիրական լոգունգներ են տալիս: Հարցի լուծումը նաեւ կախած է Հայաստանի դիրքորոշումից: Հայաստանի իշխանութիւնը պէտք է ուշադրութիւն դարձնի սփիւռքին: Եթէ ժամանակին բացատրւել հայրենիքի գոյութեան կարեւորութեան մասին, այսօր մենք այս ճակատագրին չէինք ենթարկուի: Իրանահայութիւնը 400 տարուց իվեր ապրել է Իրանում եւ այսուհետ էլ կապրի: Չեմ քաջանում, մեր միութենականներից էլ են գնացել արտասահման, բայց մենք անտարբեր չենք եղել, հրախրել ենք տարեց մտաւորականներին ու խորհրդակ-ցութիւններ կազմակերպել, եւ իհարկէ արդիւնքը դրական էր: Մենք այդ բախտն ունենք, որ սահմանակից ենք հայրենիքին, ինչո՞ւ կորցնենք այդ հրաշալի բախտը, ինչո՞ւ գաղթենք, ինչո՞ւ այստեղ հնարաւորութիւն չատեղծենք: Մենք մտածում ենք եւ կանք, դուք էլ արտացոլէք եւ յոյս ունենք կը հասնենք մեր նպատակին: Ես շատ լաւատես եմ:



Վերջերս «ԲաՖՖի» միութիւնը Հայաստանից խմբեր է հրաւիրել: Ի՞նչ հիմունքներով է դրանց հրաւիրում:

Ճիրայր Մովսիսեան- Հիմա բարեբախտաբար բոլորս ինչ-որ չափով ծանօթ ենք Հայաստանի մշակութային եւ հասարակական կեանքին: Կան մարդիկ, որոնք այդ գծով աշխատում են: Մենք պատահական խմբին կամ անհատին չենք հրաւիրում: Դրա փաստը մեր հրաւիրած թատերախումբն է: Եթէ մենք միայն մտածէինք միութեան ակնկալիքի մասին, իհարկէ կարող էինք պատահական խմբեր հրաւիրել: Մենք այդ ձեւ ակնարկած որակը նկատի ունենք: Թեհրանում թատերական տարբեր բեմադրութիւններ է եղել, որոնց ներկայացման ժամանակ սրահները թափուր են մնացել: Սա շատ ցաւալի երեւոյթ է: Պէտք է աշխատել ներկայացուցիչ ծրագիրը, թէ՛ որակ ունենալ եւ թէ՛ գրաւորութիւն:

Դուք միջմիութենական յարաբերութիւններին ակնարկեցիք: Ինչքան գիտենք այդ յարաբերութիւնները Ի-Ի յեղափոխութեան առաջին տարիներին այնքան էլ սերտ չէին: Արդեօք կացութիւնը բարեփոխել է, թէ՞ ոչ:

Պետրոս Աբգարեան- Ոմանք արտայայտում են մի բան, իսկ գործադրում մի այլ բան: «Համագործակցութիւն» եւ «միասնակցութիւն» բառերը դարձել են ոմանց համար լոգունգի առարկայ: Մենք բազմիցս մասնակցել ենք հանդիպումներին, իսկ ազգային իշխանութիւնների կողմից համագործակցելու քայլ չենք նկատել: Ծիշտ է, 15 տարուց յետոյ կացութիւնը որոշ չափով փոխել է, բայց խուսափողական քաղաքականութիւնը դեռ թոյլ չի տալիս միասնական աշխատել:

Ճիրայր Մովսիսեան- Ասենք մարզական ասպարէզում հարց չունենք, յարաբերութիւնները նորմալ են, բայց... որտեղ ընդհանուր ժողովրդի շահերն են նկատի առնում, մենք ամենայն սիրով ընդառաջում ենք, իսկ որտեղ պահանջ-տուժ են անհատական եւ հատածային շահեր, մենք դիմադրում ենք:

Հայաստանում կայացած առաջին Համահայկական խաղերում բոլորը մասնակցեցին իրենց ապրած քաղաքների անուն տակ: Մակայն մենք լսեցինք, որ խախտելով որոշումը՝ մի քանի տեղ հնչել է մի ինչ-որ միութեան անունը: Արդեօք այս անգամ էլ կարգը նո՞յնն է, թէ միութիւնները կը մասնակցեն իրենց անուններով:

Ճիրայր Մովսիսեան- Մենք եւս ակնատես եղանք ձեռ ակնարկած խախտմանը, եւ երկրորդ Համահայկական խաղերի նախապատրաստական ժողովներում մենք մեր բողոքի ձայնը բարձրացրինք: Մենք հաւատացած ենք, որ անպայման պէտք է ներկայանալ որպէս համայնք: Դա մի միութեան մենաշնորհը չի լինի դարձնել, թէկուզ այդ միութիւնից ամենաշատ մարզիկները մասնակցած լինեն: Այս անգամ առերեսոյթ դրամքը փոխել է: Տայ Աստուած այսպէս լինի: Յուսանք:

Խմբերը ի՞նչ հիմքերի վրայ են ընտրում:

Ճիրայր Մովսիսեան- Այս անգամ կեանքի է կոչել մի 7 հոգանոց յանձնախումբ (7 միութիւնների ներկայացուցիչներով), որտեղ մասնակցում է նաեւ մեր ներկայացուցիչը: Միութիւնների միջեւ եղած գրութիւններն ու նաեւ խորհրդակցութիւնները մեզ բերում է այն եզրակացութեան, որ ինչ-որ դրական տեղաշարժեր են կատարում: Լրիւ համոզմունք յայտնելու համար դեռ շուտ է: Այսքանը համագործակցութեան մասին: Իսկ ինչ վերաբերում է մարզիկների ընտրութեանը՝ դեռ վաղ է արդարութեան կամ անարդարութեան մասին խօսելը:

Պետրոս Աբգարեան- Ես ձեզ տեղյակացնեմ, որ ներկայիս համալիրի վարչութեան անդամներն են՝ Պետրոս Աբգարեանը (նախագահ), Ճիրայր Մովսիսեանը (քարտուղար), ՇոգէՖ Քեչիշեանը, Շարմէն Սկրտչեանը, Անդրանիկ Փուլադեանը, Արեւիկ Ամրանեանը, Մարիա Վիսաին, Հայկ Խաչատեանը, Նորիկ Վարդեանը, Ռաֆիկ Օրուջեանը եւ Ճիրայր Նաւասարդեանը: Առիթից օգտւելով ես կատարեալ յաջողութիւն են մաղթում մեր բոլոր մարզիկներին եւ շնորհակալութիւն յայտնում ձեզ, ձեր ցուցաբերած ուշադրութեան համար: ■

**Շարգազրոյցը վարեց
Վ.Վարդանեանը**

Իրանահայ Համայնք

Փերիոյ Կրթասիրաց միութեան Թեհրանի մասնաճիւղի կենտրոնատեղիի բացման հանդիսութիւն «ԲաՖՖի» համալիրում. Մոյն քաւկանի յունիսի 29-ին «ԲաՖՖի» համալիրի դահլիճում կազմակերպել էր մի հանդիսութիւն՝ նիւրած «Փերիոյ Կրթասիրաց» միութեան Թեհրանի մասնաճիւղի կենտրոնատեղիի բացմանը:

Բացման խօսքից յետոյ ելոյք ունեցաւ նորաբաց միութեան վարչութեան անդամ պրն. Մ. Թահմասեանը: Վարչութեան ներկայացուցչի խօսքը վերաբերում էր միութեան նպատակներին, ծրագրերին եւ ձեռքբերումներին:

Ելոյք ունեցաւ նաեւ վաստակատր բանասէր, պատմաբան եւ Նոր Զուղայի Ս. Աննիկիչ. վանքի մատենադարանի տնօրէն պրն. Լեւոն Միւսատեանը: Նա իր խօսքերի մէջ ասաց. «Միութիւնը որեւէ կուսակցական հակում չունի եւ չի պատկանում որեւէ խմբակցութեան: Նրա դռները միշտ բաց են բոլորի առջեւ»:

Ծրագրի առաջին բաժնի եզրափակիչ խօսքն ասաց Թեհրանի Թեմի բարեխնամ առաջնորդ Տէր Մեայուհ եպիս. Սարգսեանը:

Սրբազան հայրն իր գոհունակութիւնն յայտնեց այդ նոր կենտրոնի բացման առթիւ: Այնուհետեւ անդրադարձաւ Հայաստանում, Իրանում եւ հայկական գաղութներում տեղի ունեցող արտագաղթին, այն համարելով «մեղք»: «Խաբուսիկ է, որ Ամերիկայում հայը, հայ կը մնայ: Տեղափոխութիւնը միշտ չէ, որ յաջողութիւն կը բերի», - ասաց թեմակալ առաջնորդը: Սրբազան հայրը նորաբաց միութեանը ասաց. «Մենք մեր ունեցածին տիրութիւն պիտի անինք»:

Սրբազան հօր խօսքերը մեծ խանդավառութիւն ստեղծեց: Գեղարեստական բաժնում մի քանի անգամ ելոյք ունեցաւ «Ա. Սողոմոնեան» եւ «Յ. Թովմասեան» դպրոցների համատեղ երգչախումբը՝ ղեկավարութեամբ Ժ. Արքահամեանի: Այս բաժնում ելոյք ունեցան նաեւ պարսխումբը եւ անհատ ասմունքողները:

2001 քաւկան յուլիսի 5-ին «Մութերեան» սրահում տեղի ունեցաւ «Արարատ» օրիորդաց դպրոցի տարեկերթի հանդէսը:

Չեռնարկը սկսեց քատերական ներկայացումով՝ «Նոր վարժուհին»: Նրկատի ունենալով աշակերտ-ուիիների քատերական փորձ չունենալու հանգամանքը, պէտք է գերազանց գնահատել նրանց բեմադրութիւնը, մանաւնդ որ փորձերի համար նկատի էր առնել շատ կարճ ժամկետ: Դերերում ներկայացան՝ Ազափէ Զաքարեանը, Թայիկ Մարխանեանը, Թայիկ Քեշիշեանը, Սեւանա Ալեքսանդրեանը, Մառիմա Շահնագարեանը, Սելին Մարգարեանը եւ Սեւակ Աւագեանը:

Այնուհետեւ ընթերցուց ուսուցչուհիների եւ ծնողների խորհրդի համատեղ զեկոյցը: Չեկոյցի ընթերցումից յետոյ ելոյք ունեցաւ դպրոցի երգչախումբը՝ ղեկավարութեամբ Շաքէ Մնացականեանի: Երգերի ընթացքում աշակերտուիիները արտասանում էին հայրենաշունչ բանաստեղծութիւններ: Այս ձեռնարկի յաջողութիւններից մէկը եղաւ փոքրիկ երգչուհու հրաշալի ձայնի յայտնաբերումը: Ըստ իս Անի Աղուբեանը օժտուած է մի հրաշալի եւ բնատուր ձայնով, որ եթէ նրա ձայնը ճիշտ հիմքերի եւ վարպետ խմբավարի հսկողութեան ներքոյ մշակվի, անաւարակոյս նա կը դառնայ մեր ապագայ մեծ երգչուհիներից մէկը:

Երգչախմբի ելոյքից յետոյ դպրոցի տեսչուհու, փոխ տեսչուհու եւ Կրթական Խորհրդի ներկայացուցիչների միջոցով տարտական վկայականներ յանձնեցին երրորդ ուղեցոյցի աշակերտուիիներին: Նախքան տարտականների յանձնումը աշակերտուիիների շնորհակալութեան խօսքը ընթերցուց երկու աշակերտուիիների միջոցով՝ ուղղած դպրոցի տեսչուհուն, ուսուցչուիիներին, ծնողական խորհրդին եւ բոլոր նրանց, ովքեր իրենց ղերն էին ունեցել աշակերտուիիների յաջողութեան մէջ:

Վերջում ծնողական խորհուրդը ներքեր էր պատրաստել այն անձանց համար, որոնք առանց որեւէ ակնկալիքի իրենց մասնակցութիւն էին բերել տարեկերթի ձեռնարկի աշխատանքներին:

Ծրագրի յաջող իրագործման մէջ անշուշտ անսակարկելի ղեր ունէր Ռուբինա Խաչատրեանը:

Պարոյր Սեւակին նիւրած բանախօսութիւն Բ.Ա.Մ. միութիւնում.

Մոյն քաւկանի յուլիսի 4-ին վերոյիշեալ միութիւնում կազմակերպել էր մի բանախօսութիւն նիւրած հայ հոշակատր բանաստեղծ Պարոյր Սեւակին: Օրուայ բանախօսն էր իրանահայ հանրա-ծանօք գրող եւ բանաստեղծ Խաչիկ Խաչերը (Գալստեան):



Բանախօսը նախ հակիրճ ներկայացրեց մեծ բանաստեղծի կենսագրականը: Այնուհետեւ մէջբերելով հեղինակի յայտնի ստեղծագործութիւնները՝ «Անլուրի Զանգակատուն», «Մարդը Ափի Մէջ», վերլուծեց բանաստեղծի ստեղծագործութիւնների այն բաժինը, որոնք համամարդկային բնոյք ունեն: Բանախօսը փորձեց հեռացնել այն քիւր հասկացողութիւնը, որ իբրքէ Պարոյր Սեւակը գուտ հայրենասիրական եւ ազգասիրական թեմաներով գրող բանաստեղծ է:

Խ. Խաչերն ասաց. - Պարոյր Սեւակը իրապէս ժամանակի ծնունդ է, եւ ժամանակն էր պահանջում, որ պէտքի Պարոյր Սեւակ ծնէր: Բանախօսի խօսքերով մեծ պոետը հուատացած էր, որ պէտք է դարի պահանջների հետ քայլել, միշտ պէտք է նոր բան մատուցել առանց հերքելու անցեալի ժառանգութիւնը:

Պ. Սեւակի բանաստեղծութիւնների ամէն մի տնում, եւ նոյնիսկ ամէն մի տողում մի նոր խօսք է ասուած: Այնպէս, որ նրա ստեղծագործութիւնների առաջին տողերից երբեք չես կարող կռահել, որ շարունակութիւնում ի՞նչ պիտի ասի, - ասաց օրուայ բանախօսը:

Ողջունելի է նմանատիպ ձեռնարկները, մանաւանդ յուսադրական էր այն հանգամանքը, որ բանախօսութեանը ներկայ էին մեծ թուլ երիտասարդներ:

Իրան

Իրանը եւ Ռուսաստանը սերտօրէն կը համագործակցեն տարածաշրջանային հակամարտութիւնների կարգաւորման գործում (28.06.01 Արմէնպրես). - Իրանը եւ Ռուսաստանը սերտօրէն կը համագործակցեն տարածաշրջանային հակամարտու-



թիւնների կարգաւորման գործում: Ռուսաստանի արտգործնախարարութեան հաղորդման համաձայն, դա հաւաստել է ՌԴ փոխարտգործնախարար Վեաչեսլավ Տրուբնիկովի եւ Իրանի դեսպան Մեհդի Սաֆարիի հանդիպմանը:

Կողմերն ընդգծել են տարածաշրջանային անվտանգութեան եւ կայունութեան, ինչպէս նաեւ միջազգային ահաբեկչութեան, ծայրահեղականութեան եւ թմրաբիզնեսի սպառնալիքներին հակազդելու բնագաւառում համագործակցելու երկուստեք ձգտումը: Միջազգային եւ տարածաշրջանային հրատապ խընդիրների քննարկման ընթացքում, նշում է հաղորդագրութեան մէջ, հիմնական ուշադրութիւնը դարձել է Լեռնային Ղարաբաղի խնդրով Միւնչեսկի խմբի աշխատանքին, ինչպէս նաեւ Աֆղանստանի իրավիճակին:

Նախագահ Խաթամին ընդունեց Հայաստանի նախագահի գլխասենյակի տնօրէնին. - ԻԻՀ նախագահ Խաթամին պրն. Ար-տաշէս Թու-մանեանի հետ հանդիպման ժամանակ Իրան-Հայաստան յարաբերութիւնները լաւ բնութագրեց եւ յարա-բերութիւնների առաւել զարգացում ցանկացաւ: Նախագահ Խաթամին յատկապէս կարեւոր համարեց ճանապարհափոխարդական եւ էներգետիկայի փոխադրման որոշումների իրագործումը: Ըստ պրն. նախագահի, Իրան-Հայաստան զագատարի եւ «Գաջարան» թունելի կառուցման դէպքում երկու կողմերը տնտեսական մեծ յաջողութիւնների կը հասնեն:

Պրն.Խաթամին Ղարաբաղի հարցի լուծման համար ամենալաւ տարբերակը համակողմանի խաղաղ հանդիպումները համարեց, եւ այդ կապակցութեամբ յայտնեց, որ Իրանը սիրալոծար պատրաստ է աջակցելու:

Պրն. Ա.Թումանեանը շնորհակալութիւն յայտնեց Ղարաբաղի հարցի լուծման հետ կապուած Իրանի կողմից ցուցաբերուած բարիացակամութեան համար, եւ յայտնեց տարածաշրջանի խաղաղութեան ու ապահովութեան հարցերը, առանց Իրանի մասնակցութեան անհնար է:

Այսթոյլահ Չաննաթի,- Նաթի կողոպտիչների անունները գիտեն, որոնք նաթից գոյացած գումարները լցրել են իրենց արտասահմանում բացած անձնական հաշիւներին. - Իրանի «Պահապան» խորհրդի գլխատըր քարտուղարը զոհերի մեծարման 28-րդ տարեկիցի առնչութեամբ տեղի ունեցած ոգեկոչման ձեռնարկի ժամանակ յայտարարելով այդ լուրը ասաց. «Ի՛ն խորհրդարանը առանց «Պահապան» խորհրդի գորկ է հեղինակութիւնից»: Ըստ Այսթոյլահ Չաննաթիի ԻԻՀ սահմանադրութեան համաձայն ԻԻՀ խորհրդարանը սահմանափակ իրաւասութիւններ ունի, եւ եթէ մի օր «Պահապան» խորհուրդը ինչ-որ պատճառով կազմալուծի, ինքնաբերաբար ԻԻ խորհրդարանն էլ կը զրկւի իր իրաւասութիւններից:

Նա իր ելոյթի մի այլ բաժնում ասաց. «Ամերիկան, Իսրայէլը եւ որոշ եւրոպական երկրներ Իրանի կարգերի տապալելու մտադրութիւն ունեն, պէտք է դուադրութիւնը կանխել»:

Ամերիկայի Սենատի «Բանկատերերի» կոմիտէն Իրանի տնտեսական շրջափակման ժամկետի երկարումը վստեղացրեց. - ԻՌՆԱ-ի հաղորդման համաձայն վերոյիշեալ կոմիտէն 5 տարով երկարացրել է Իրանի եւ Լիբիայի տնտեսական շրջափակման ժամկետը: Ամերիկայի Սենատի դեմոկրատ Ֆրակցիայի պատգամատը Փ. Սարբանեզի կարծիքով այդ շրջափակումը պէտք է 5-տարով երկարացի, եւ քանի որ այդ առաջարկը միանգամից ստորագրել են Սենատի 77 պատգամատրներ, ուստի նշանակում է Ամերիկան միաձայն համաձայն է այդ առաջարկին:

Հայաստան

Հայաստանը հաւակնում է դառնալ «Քաղաքացիական ապաստանի մասին» օրնէք ընդունած առաջին երկիրն ԱՊՀ-ում (06.06.01 Արմէնայրես). - ԱՊՀ որեւէ երկրում «Քաղաքացիական ապաստանի մասին» օրնէք չի ընդունել, եւ կառավարութեան այսօրայ միտում հաւանութեան արժանացած այդ օրնէքի նախագծի ընդունումը միջազգային հանրութեան կողմից կը դիտուի որպէս Հայաստանում մարդու իրաւունքների

րի պաշտպանութեանն ուղղած քայլ: Այս մասին լրագրողների հետ ճեպագրոյցի ժամանակ ասաց կառավարութեանն արընքեր միգրացիայի եւ փախստականների գործերով վարչութեան նախագահ Գ. Եզանեանը, նշելով, որ մինչ այժմ քաղաքացիական ապաստան ստանալու համար Հայաստանի իշխանութիւններին չեն դիմել այն պատճառով, որ յիշեալ կացութեան կարգավիճակ ստանալու հնարաւորութեան բացակայութեան պարագայում օտարերկրեայ քաղաքացիներն ստիպուած էին դիմել փախստականի կարգավիճակ ստանալու խնդրանքով:

Արմէն Ղազարեանը՝ աշխարհի Աշենայի (03.06.01 Արմէնայրես). - 62կգ. քաշային կարգի ծանրամարտիկ Արմէն Ղազարեանը նաճնց Սալոնիկում (Յունաստան) ընթացող աշխարհի երիտասարդական առաջնութեան յարթողի կոչումը: Հրում եւ պոկում վարժութիւններում սպիտակցի մարզիկը ցոյց տուց 130 եւ 165 կգ. արդիւնք, ինչը երկամարտում կազմեց 295 կգ.:

Նոյն քաշային կարգում Հայաստանի եւս մէկ մարզիկ՝ Բաղրամեան գիտի բնակիչ Արթուր Դանիէլեանը, որի մարզիչն է օլիմպիական չեմպիոն Օզսեն Միրզոյեանը, 280 կգ արդիւնքով (125 եւ 155 կգ) դարձաւ բրոնզէ մրցանակակիր, իսկ 56 կգ քաշային գիւմրեցի Մակար Թամրազեանը նաճնց արծաթէ մեդալ՝ 242,5կգ (105 եւ 137,5 կգ): Նման փայլուն արդիւնք Հայաստանի մարզիկները չեն ցուցադրել շատ երկար ժամանակ: Ի դէպ, Սալոնիկում հանդես են գալիս 8 հայ ծանրորդներ, եւ այս արդիւնքը դեռ վերջնականը չէ: Լոյս-Վերջին լուրերի համաձայն Հայաստանի հաւաքականը նաճնց աշխարհի երկրորդ պատուատըր տեղը:

Հայաստանում ԱՄՆ-ի նոր դեսպանն է Ջոն Օրթոն (27.06.01 Արմէնայրես). - ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը Հայաստանում դեսպան է նշանակել Ջոն Օրթոյին, որը մինչ այդ, 1999թ. ի վեր եղել է Ռուսաստան

նում ԱՄՆ-ի դեսպանատան թի 2 պաշտոնեան:

Չինական զինտրական պատի-րակութիւն Երեւանում.- Յունիսի 28-ին ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը ընդունեց եւօրեայ այցով Հայաստան ժամանած Չինաստանի բարձրատիճան զինտրական պատիւրակութեանը՝ գեներալ-մայոր Յի Եան Խանի գլխատրութեամբ: Հանդիպմանը ներկայ էր ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան դեսպան Չժու Չժաշունը:

ՀՀ ՊՆ լրատութեան եւ քարոզչութեան վարչութիւնը տեղեկացնում է, որ կողմերը ընդհանուր գծերով ներկայացրել են իրենց երկրների զինուած ուժերի կառուցածքը, ծանօթացրել ընթացող բարեփոխումների եւ արդիականացման գործընթացների: Քննարկել են նաեւ երկու երկրների ռազմական համագործակցութեան հնարատր հեռանկարները, տարածաշրջանային զարգացումներին առնչող եւ այլ խնդիրներ:

Անգլերէն լոյս է տեսել հայ թատերգութեան ժողովածու (28.06.01 Արմէնպրես).- ԱՄՆ-ի «Կոլումբիա» համալսարանն անգլերէն լոյս է ըն-ծայել «Ժամանակակից հայ թատերգութիւն» սուարածաւալ անթոլոգիան, որը կազմել ու խմբագրել են Նի Եօրքի համալսարանի պրոֆեսոր Ն. Փարլակեանը եւ Կալիֆորնիայի համալսարանի Նարեկացու անուն ամբիոնի ղեկավար, անամի հայագէտ Փիթըր Քաուի: Ժողովածուում տեղ են գտել Գ. Սունդուկեանի «Պեպօ», Յ. Պարոնեանի «Մեծապատի մուրացկաններ», Ա. Ծիրանգաղի «Պատի համար», Լ.Շանթի «Հին աստածներ», Դ.Դեմիրճեանի «Քաջ Նազար» պիեսները: Ժամանակակից հեղինակների գործերից ընտրուել են Պ. Ձէյրունցեանի «Անաւարտ մեմախօսութիւնը» եւ Ա. Աղասարեանի «Խելագարներ ամբողջ աշխարհի, միացէ՛ք» գործերը:

Հայ երաժշտարեստը՝ գերմանական բառարանում (25.06.01 Արմէնպրես).- Գերմանիայում հրատարակող 22-հատորանոց երաժշտական բառարանում տեղ են գտել նաեւ

նիւթեր հայ կոմպոզիտորների ու հայկական երաժշտական գործիքների մասին: Դրանք բառարանի խմբագրակազմին տրամադրել է Կոմիտասի անուն կոնսերւատորիայի պրոֆեսոր, երաժշտագէտ Սետլանա Սարգսեանը:

Ինչպէս նշեց երաժշտագէտը, այդ բառարանը կազմւած է 2 մասից: Առաջին 10 հատորներում հրատարակուել են աշխարհի յայտնի երաժշտագէտների կենսագրութիւնները (կենսագրական բառարան), իսկ միւս 12 հատորներում տեղ են գտել բացատրութիւններ աշխարհի երաժշտական գործիքների մասին (տերմինաբանական բառարան): Վերջինի բոլոր հատորներն արդէն հրատարակուել են: Իսկ կենսագրականի երրորդ հատորը լոյս է տեսել այս տարի, որտեղ եւս ներառուած են նիւթեր հայ կոմպոզիտորների մասին:

Միջազգային

Թել Աիւում ահաբեկչութիւնից սպանել է մի հայուհի.- «Արմինեան միտր սիեքթէթթ» շաբաթաթերթը յայտնում է, որ յունիսի սկզբներին Թել Աիւի «Դոլֆի» դիսկօ-ակումբում կատարուած ահաբեկչութիւնից զոհուել են 16 տարեկան հայուհի Լ. Սահակեանն ու 21 տարեկան վրացի Ռոման Ջանիշվիլին: Թերթը նաեւ տեղեկացնում է, որ ըստ «Մոսկովսկի կոմսոմոլցի»՝ զոհերից շատերը եղել են նախկին ԽՍՀՄ-ից արտագաղթած քաղաքացիներ:

ԼՂՀ վարչապետը մեկնեց ԱՄՆ եւ Կանադա (28.06.01 Նոյեան Տապան).- Յունիսի 27-ին ԼՂՀ վարչապետ Անուշարան Գանիլեանն աշխատանքային այցով մեկնել է ԱՄՆ եւ Կանադա, որտեղ նախատեսուած են հանդիպումներ մի շարք քաղաքական գործիչների եւ գործարարների հետ: Քննարկուելու են ԼՂ տրնտեսութեան տարբեր ոլորտներում, մասնատրապէս, վերամշակման արտադրութիւնում եւ էներգետիկ համակարգում ներդրումներ կատարելու հնարատրութիւնները:

Վարչապետը ելոյթ կունենայ Կանադայում կայանալիք հայկական միջազգային զիտա-ժողովում, որտեղ ներկայացուելու են սփիւռքահայ գոր-

ծարարների ու բա-րեգործների տըն-տեսական ծրագր-րերը Լեռնային Դարաքաղի վերաբերեալ:



Իրանը միջնորդական «ոչ մի դեր» չի խաղում դարաքաղեան հակամարտութեան կարգաւորման գործում, յայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանը (27.06.01).- ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակում Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների բանակցութիւնների հերթական փուլի ժամկետը տակաւին անյայտ է մնում, յայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Ռոս Վիլսոնը:

Ինչպէս հաղորդում է Կասպեան լրատական գործակալութիւնը, ամերիկացի դեսպանը նշել է, որ միջնորդներն առայժմ տեղեակ չեն դրա վերաբերեալ Հ. Ալիեւի եւ Ռ. Քոչարեանի կոնկրետ ծրագրերին: Ռոս Վիլսոնն իր վերաբերմունքն է արտայայտել նաեւ Ադրբեջանի կողմից ԼՂ այսպէս կոչուած հակաահաբեկչական գործողութիւն անցկացնելու հրմարատրութեան նկատմամբ: Ինչպէս նշել է դիւանագէտը, Հ. Ալիեւի վարչակազմը մնան միջոցների դիմելու մտադրութիւն չունի:

Խօսելով տարածաշրջանային հակամարտութիւնների կարգաւորման գործում իրանական կողմի ակտիւացման մասին, ամերիկացի դեսպանը յայտարարել է, որ Իրանը, չլինելով ԵԱՀԿ-ի Լեռնային Դարաքաղի խնդրով Մինսկի անդամ, միջնորդական «ոչ մի դեր» չի խաղում:

Պայն այցելեց Լուվի հայկական եկեղեցի (27.06.01 Նոյեան տապան).- Հռոմի պապը յունիսի 25-ին այցելել է 1363թ. կառուցուած Լուվի «Սուրբ Աստածածնի վերափոխման» հայկական եկեղեցի: Եկեղեցում պապին ողջունել են Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդ Գրիգորիս եպս. Բուհիթեանը, Ուկրաինայում ՀՀ դեսպան Հրաչիկ Սիււանեանը:

Ներկայ էին նաեւ Ուկրաինայի կենտրոնական գործադիր իշխանութիւնների, տեղի մարզային եւ քաղաքային վարչակազմերի, հոգեւոր շրջանների, հայ համայնքի ներկայացուցիչներ: ■

Հասարակական

Յեղասպանության վերապրողների յուշերից

ՕՅ ԷՅ ԲՇՅ ԸՇ 3/4Շ1/2»Յ Կ Դ ձՇ. անՇ
 à Յ i ՍՅ Ի Բ (Ի Կճ. 1921 Բ.)



Մինչև 1915 թիւը պապաս երկաթագործ էր՝ չուք, արորի խոփ, գէնք մէնք կը շինէր: Օր մը թուրքերը էկան մեր տունը խուզարկեցին: Քանի որ մալաթիացի հայերը շատ կազմակերպւած էին, անոնք միշտ պատրաստ էին: Ամէն ընտանիքում մէկ երկու հրացան կը գտնէր:

Ուրեմն օր մը երկու թուրք զարիթներ էկան, հօրս ըսին.- Հրցաններդ

տուր:

Քանի որ որուն որ հայրս հրացան էր վաճառել, անկէ ինձացել էին ումէ՞ն է առած:

Պապաս ըսաւ.- Ես հրացան չունեմ:

-Ո՞նց չունես, մենք գիտենք, որ դուն ունես: Ունենալդ ալ գիտենք, քանի հատ ըլլալն ալ գիտենք:

Պապաս հրացանը պարտէզին մէջը, ծառի տակ թաղած է լինում. կերթայ տեղը ցոյց տալու, էստեղ կը փորեն՝ չկայ, էնտեղ կը փորեն՝ չկայ:

-Մէկ է, հրացանդ պիտի տաս տաններք,-կըսեն թուրքերը:

Վերջապէս կը փորեն, հողի մէջէն կը հանեն, իրեն ալ հրացանին հետ կ'առնեն կը տանին: Տունէն դուրս գալու ժամանակ, մութին մէջը, թուրքերէն մէկը կը ճանչնայ իրեն, կըսէ ընկերոջը.- հրացանը տանում ենք... բոլ է, իրեն ի՞նչ պիտի ընենք տանինք, բա՞ց թողնենք՝ թող էրթայ:

Այսպիսով պապայիս կազատեն, պապաս կուզայ տուն:

Քանի մը օր ետքը ուրիշ թուրք զարիթներ կուզան, կը տանին հօրս, էն տանելն է, որ տանում են, Քելեփչեներով ձեռքերը կը կապեն, երկու հոգու ալ իրար կը կապեն, քելեփչեներով, որ չփախին: Թուրքը գործը պիտի կը բռնի: Ո՞ր կը տանին, Աստուած գիտէ:

Քանի մը օր կը տանին: Պապաս, որ արհեստաւոր մարդ է լինում, գրպայնը խարտոց կուրենայ, կամաց-կամաց կը խարտէ, քելեփչեն կը կտրէ, մէկը միստէն կը պոկւի, փախչելու մասին կը մտածէ: Յերեկով անհնար էր, կորոշեն զիշերով փախչել: Երբ աքտորականներին կը տանին ինչ-որ բաց տեղում զիշերելու, էդ զիշեր կորոշեն փախչել: Գալիս են պահակին խնդրում են, թէ՛ պէտք ունինք: Պահակը կը թողնէ, բայց՝ չեն փախչի, օձի ձեռքէն մա՞րդ կը փախչի: Երկրորդ անգամ նորէն կը խնդրեն՝ պէտք ունինք, թուրք պահակը նորէն կը ձգէ, բայց անոնք չեն համարձակուիլ փախչիլ: Երրորդ անգամ նորէն կերթան պահակին կըսեն՝ պէտք ունինք: Պահակը, որ հրացանով զինուոր մըն էր, կըսէ.- Նէ բոք ետջեքսին՝ եի՞ն (ինչ ք... պիտի ուտէ՞ կերէ՞ք): Ասոնք ուժ կ'առնեն, կ'ծիկնին կը դնեն, կը փախին: Քանի մը մետրոյ հեռանալէն վերջը ետեմէն կը պոռան.- Քաշողը՛ր, փուրը՛ն (փախա՛ն, կըսելէ՞ք):

Այսպիսով հայրս կազատի կուգա նորէն Մալաթիա: Կերթայ բարեկամներուն քովը, անոնք չեն ընդունիր. կը վախճան, որ իրենց ալ վնաս կուզայ: Կերթայ Եփրատի ափին Կորուջուխ գիւղը, անտեղ մի թուրք ծանօթ ունի էր-

էր՝ Հուսէին անունով: Աղ թուրք Հուսէինն ալ դըրբաշ կլլայ (կարմրագլուխ): Կռնն հօրս կը պահէ, չնայած որ հրաման կար. «Որուն տունը, որ հայ գտնանք՝ կը պատժի»:

Աս թուրքերը պապայիս կը պահեն՝ գետնի տակը թաքտաքտի մէջ: Գիշերները դուրս կը հանեն, որ օդ առնէ, յետոյ՝ լուսադէմին, նորէն գետնի տակ կը մտցնեն:

Երբ հայերուն կոտորածը կը վերջանայ, պապաս կուզէ գալ Մալաթիա՝ իր տունը: Աս թուրք Հուսէինի վեց եղբայրները կը խնդրեն հօրս, որ մնայ, որ իրեն ամուսնացնեն, քանի որ ան իրենց համար արոր, չուք է ալ յալն կը շինէր: Բայց հայրս չի համաձայնիր:

Թուրքերը կըսեն.- Է՛, եթէ չես համաձայնում, ուրեմն՝ գնայ քո տունը:

Հայրս կուզայ Մալաթիա, կը լսէ, որ կնոջը եւ երեխային սպանել են աքտորի ճամփաներին...

Մտիպած նորէն կ'ամուսնանայ հայու հետ, ծայրէն տուն տեղ կը դնէ: Ես պապայիս անդրանիկ գաւակն եմ՝ Գրիգորը, ծնած են 1921 թին: Յետոյ՝ 1925-ին կը ծնի միւս եղբայրս, մինչև 1929 թիւը պապայիս ընտանիքը աղ թուրք Հուսէինի վեց եղբայրներուն հետ շատ սերտ կապեր ունէր, քանի որ անոնք հօրս կեանքը փրկած էին: Ամէն տարի կով, իւր, պանիր, ձմերուկ եւ ուրիշ շատ բաներ կը բերէին մեզի ներքին: Աս թուրքերը մեզի շատ լաւութիւններ ըրին: Այնքան կը սիրէին պապայիս, որ իրենց քսակով ոսկին կը բերէին պապայիս մօտը կը պահէին: Կամ երբ շուկայ կուզային, պապայիս ալ հետերնին կ'առնէին, որ գնումների հաշիւները ինքը ընէ, այնքան որ վստահում էին պապայիս:

1929 թին, երբ մենք որոշել էինք Մալաթիայէն Հայաստան գալ, Հուսէինը իր վեց եղբայրներով էկան աստուային առաջգետնինը պառկեցան, խնդրեցին, որ չերթանք: Բայց պապաս ըսաւ.- Չէ՛, իմ հայրենիքս է, պիտի՛ էրթամ:

Թուրք եղբայրները ըսին.- Գնա՛, Յովհաննէս, բայց չփռմանն, իսկ եթէ լաւ ըլլայ, գրէ՛ մենք ալ կուզանք:

Աս տեսակ թուրքեր ալ կան:


Մենք ընտանիքով 1929 դեկտեմբերին թրեմ նստանք Մամսոն գաջինք, Մամսոնէն մաւ նստանք, էկանք Տրապիզոն: Աղ ժամանակ ես իննը տարեկան էի: Տասնինգ օր մնացինք, երտեղից թոյլատուրիս ամբողջ էկանք Բաթում: Բաթումէն ալ տաւարնի վագոնով էկանք Հայաստան՝ տուրիստ, ու մնացինք: Մեզի Երեւանի Մալաթիա թաղամասը բերին, ան ժամանակ ալ աս կողմերը տուն-մուն չիկար: Միայն տասնինգ կիսատ-պռատ տուններ էր կառուցել Դպրոցասիրաց ընկերութիւնը: Մեզի աղ տունը մէջը տեղաւորեցին: Ոչինչ չունէինք: Ամէն ինչ ծայրէն սկսանք: կամաց-կամաց տուն-տեղ եղանք: Պապաս առաջին կոլխոգի հիմքը դրեց: Ո՛չ տրամուս կար, ո՛չ աւտոբոս, ո՛չ աղբիւր կար, ո՛չ լոյս, ո՛չ ալ ուտելիք: Բոշկատով ջուրը կը բերէին՝ կը բաժնէին: Օր կըլլար արաբայիս թեքերը կը փչանար, ջուր չէին բերէր... Անձրեւին, ձիւնին ջուրերը կը հաւաքէինք, որ օգտագործէնք... մեր տունն ալ հիմիկայ Մալաթիայի շուկային դիմացն էր...

Աս ձեռով ապրեցանք, կոլխոգը աշխատեցանք: 1941 թականին պատերազմը որ սկսու, ես կամաւոր գնացի ճակատ: Բայց մերոնց, որպէս կոլխոգիկի, հացի գրքոյկ անգամ չէին տալիս: Անոնք ալ ստիպուած մեր պարտէզում աճեցրած խաղողը, խնձորը, տանձը, ճակնդեղը կը ծախէին էղեր՝ կիլոն հարիւր մանեթով, հաց կ'առնէն, կուտէն էղեր:

Շար. էջ 10-ում

Յովհ. Թումանյանը Հայաստան-սփիւրջարարերութիւնների ակունքների մօտ

Կարլեն Դալլարեան



Հայաստանի առաջին հանրապետութիւնը (1918-1920) ժամանակ չունեցաւ քիչ թէ շատ լուրջ կապեր հաստատելու արտերկրի հայութեան հետ: Խորհրդրդային Հայաստանի ժամանակաշրջանին բաժին ընկան նման կապերի հաստատումն ու զարգացումը, որոշակի սկզբունքների մը-շակումն այդ կապերի իրականացման տարրեր փուլերում: Պատմութեան հոլովոյթում եղան թէ դասա-

կարգային շերտաւորման սկզբունքի այլամերժ դրսեւորման տեսական ժամանակներ, երբ խզուցին կապերը, եւ սփիւրջը գրեթէ անբողջապէս օտարաց Հայաստանից, թէ քաղաքական հանդուրժողութեան ու մերձեցման շքրջաններ, երբ զարգացումը հանգեց կապերի խիստ ընդլայնման եւ ապահովեց Հայաստանի մշակութային սատարը սփիւրջին:

Բոլոր փուլերում, սակայն, բացայայտ կամ աննկատելի, յարաբերութիւնների հիմքում եղել է ազգային սկզբունքը, երբ էթնիկական պատկանելութիւնը գերակայել է քաղաքական, կուսակցական, գաղափարախօսական, դասակարգային կամ դաւանական տարանջատումների նկատմամբ: Մեծ բանաստեղծ Յովհ. Թումանյանն է եղել այդ հիմնարար սկզբունքի ներդրողը մեզանում:

1921-ի աշնանը ահաւոր կացութիւն էր ստեղծել Հայաստանում: Աւերածութիւնը, համաճարակները, մահաւանդ համատարած սովը պարզապէս հնձում էին մարդկանց: Արդէն Հայաստանի ղէկի մօտ կանգնած Ալ. Մեսանիկեանի արտակարգ ձեռնարկներից մէկը եղաւ Հայաստանի օգնութեան կոմիտէի (ՀՕԿ) ստեղծումը, որի նախագահ ընտրեց Յովհ. Թումանյանը:

Նա գերազանց զիտակցում էր, որ Հայաստանի կացութիւնը միայն առարկայական պատճառներով չէր բացատրում: Կային ոչ պակաս աղէտաբեր նաեւ ենթակայական պատճառներ: Այդ մասին նա Պոլսից գրում է Աւետիք Իսահակեանին (Վեներտիկ 1921 ղեկտեմբերի 9-ին): «Ես չեմ ուզում եւ չեմ էլ կարող երկար ու քարակ գործել մեր երկրից, թէն դու հարցնում ես: Կարճ ասեմ՝ մենք թէ դրսից, թէ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխաւորապէս մենք: Մենք են ասում, եւ նրա մէջ է ճշմարտութիւնը: Մի մասը խաչագող սրիկաներ, մի մասը՝ գողեր ու աւազակներ, մի մասը՝ ապիկար թշուառականներ... Էսքան աղէտների, պարտութիւնների մէջ ոչ մի մեղաւոր չերեսաց, ոչ որ ոչ պատասխանի կանչեց, ոչ պատասխան տուց: Եւ շարունակում է, այժմ էլ նոյն մարդիկ՝ նոյն ճանապարհներով... Եւ ոչ մէկը գոնէ անձնասպան չեղաւ, որ

ապացուցաներ, թէ գոնէ ամօթ ու խղճմտանք կայ էս մարդկանց մէջ»:

Իրերի վիճակին նման գնահատական տող Թումանյանը համաձայնեց ստանձնել ՀՕԿ-ի նախագահի պարտականութիւնը, քանի որ վստահութիւն ուներ Ալ. Մեսանիկեանի կառավարութեան նկատմամբ: Թումանյանը, սակայն, շատ արեւի լայն էր տեսնում ՀՕԿ-ի առաքելութիւնը, սովահար ժողովրդին հնարաւոր եւ շտապ օգնութիւն հասցնելու սահմաններից անդին:

1921թ. սեպտեմբերի 20-ին Թումանյանը ՀՕԿ-ի հիմնադիր ժողովին ներկայացնում է սփիւրջի հայութեանն ուղղւած կոչը: Հետաքրքրական է, որ ժողովի արձանագրութեան մէջ գրանցւած է հետեւեալը... Կոչի շուրջ առաջ եկաւ կարծիքների եռանդուն փոխանակութիւն՝ յատկապէս ոճի եւ դիմումի ձեւի մասին»: Հեղինակն ինքը Թումանյանն էր եւ սփիւրջին դիմում էր այսպէս. «Աշխարհի ամէն կողմ ցրւած հայոց ժողովուրդ: Լսիր: Քեզ կանչում է Հայաստանի օգնութեան կոմիտէն: Քեզ կանչում է Հայաստանի մայրաքաղաքում գումարւած ամէն հոսանի հայ գործիչների եւ գրականագէտների ժողովը: Եւ գուցէ երբեք, դու չես լսել նրանց ձայները այսպէս միացած եւ միահամուտ...»:

Թումանյանը անմիջապէս շեշտը դնում է «միացած եւ միահամուտ» հասկացութիւնների վրայ: Կոչի մէջ դարձեալ ու դարձեալ հնչում է ազգային միասնութեան խնդիրը: «Այո, Հայաստանի օգնութեան կոմիտէն քաջ զիտէ, որ դու էլ ես բաժանւած զանազան կուսակցութիւնների... Բայց նա լաւ զիտէ եւ այն, որ հայ ժողովրդին սովից ազատելու եւ քանդւած Հայաստանը վերաշինելու գործը վեր է ամէն կուսակցական տարածայնութիւնից»:

Մրա հետ մէկտեղ, Թումանյանի հայեցակարգում անընդհատ շեշտում է էթնիկական, այլ ոչ թէ սոցիալ-քաղաքական կամ դաւանական պատկանելութեան գործօնը: Հնկտեմբերի 16-ին լոյս տեսած «ՀՕԿ-երի առիթով» յօդւածում նա մէկից արեւի անգամներ խօսում է «ամէն մի հայի» մասին: Հայաստանին օգնել է նրա շինարար աշխատանքին պարտաւոր է մասնակցել «ամէն մի հայ մօտիկից սկսած մինչեւ հեռաւոր գաղութները»: «Էստեղ ամէն մի հայի պէտք է առաջնորդի... քաղաքացիական պարտքի խոր զիտակցութիւնը»: «Ամէն մի հայ պէտք է զգայ, որ ինքն ազատ Հայաստանի քաղաքացին է եւ գալիս է գործակցելու իր երկրի կառավարութեանը»:

ՀՕԿ-ի կոչն անմիջապէս արձագանքում է սփիւրջում: Հնչակեան կուսակցութեան Պոլսյ գործադիր մարմինը, ՀՅ Դաշնակցութեան արտասահմանի մարմինը, Հայ ռամկավար կուսակցութեան Կենտրոնական վարչութիւնը եւ Ազատական կուսակցութեան Կենտրոնական վարչութիւնը (վերջին երկու կուսակցութիւնների պաշտօնական միաւորումից մի քանի օր առաջ) դիմում են «բոլոր ժողովրդին», ճիշտ Թումանյանի ոճով կոչ անելով «զետեք» հայրենիքի ձայնը: Այդ փաստաթղթում ասւած է.

«Այս վիճակը չէր կրնար անտարբեր ձգել հայ քաղաքական կուսակցութիւնները, որոնք տեսաբանական ու թաքթիքային ինչ տարբերութիւններ ալ ունենային Հա-

Հասարակական

յաստանի քաղաքական հարցին հետապնդումին մեջ եւ որքան ալ զանազանէին իրենց հայեացքները Հայաստանի ներկայ վարչաձեւի նկատմամբ, մէկ էին մայր-երկրի ժողովուրդին Ֆիզիքական գոյութիւնը անեղծ պահելու գերազանցապէս մարդկային ու գերազանցապէս հայրենասիրական պարտականութեան ու նպատակին մէջ: Ու ահա այսօր անոնք հրապարակ կուզան հռչակելու աշխարհին եւ, մանաւանդ հայ ժողովրդին, թէ իրենք միացած են ուժ տալու Հայաստանի սպառնացող սովին դէմ մղելիք նիւրապէս կռիւն, անկեղծ ու անվերապահ սրբուսակցութեամբ մը»:

ՀՕԿ-ի նախագահութիւնը ստանձնելուց անմիջապէս յետոյ որոշում է, որ Թումանեանը պէտք է յատուկ առաքելութեամբ մեկնի Պոլիս, կազմակերպելու համար թէ անհետաձգելի օգնութիւնը Հայաստանին, եւ թէ սփիւռքով մէկ ՀՕԿ-ի սկզբունքով գործող մարմիններ ստեղծելու եւ անմիջակայս ՀՕԿ-ին սատարելու գործը: Այդ նպատակով նա հոկտեմբերի 6-ին նամակ է գրում Փարիզ՝ Արշակ Չոպանեանին, որի հետ անձնական բարեկամութիւն ունէր դեռեւս այն ժամանակներից, երբ Չոպանեանը դարասկզբին այցելել էր Վերնատուն: Թումանեանը յայտնում է ՀՕԿ-ի կազմաւորման մասին եւ խնդրում աջակցութիւն: Նամակը պարունակում է մի շարք սկզբունքային հարցադրումներ, որոնք կոչւած էին ձեւաւորելու սփիւռքի հետ սկստող յարաբերութիւնները:

Թումանեանը նկարագրում է երկրի վիճակը եւ ապա ասում. «Ինք արդէն գիտէ իմ կարծիքը, թէ էս հանգամանքներում Ռուսաստանն է մեր փրկութիւնը: Եւ էս անգամ էլ նոյնիսկ ես հարբած վիճակի մէջ ռուսները մեզ ազատեցին վերջնական փշացումից»: Սա, սփիւռքին կողմնորոշող առաջին թեզն է, ըստ որի Հայաստանում հայ ժողովրդի գոյատեւութեան հարցն ամուր կապակցւած է Ռուսաստանի հետ: Պատահական պիտի չհամարել, որ Չոպանեանը այս նամակը ստանալուց յետոյ, անելի եւս ամբարայնուած իր իսկ համոզմունքների մէջ, դեկտեմբերի 5-ին Ազգային պատմիակութեան նախագահ Գաբրիէլ Նորատունկեանին առաջարկում է հաշի մտել Խորհրդային Հայաստանի գոյութեան փաստի հետ եւ յենել նոր Ռուսաստանի գործութեան վրայ:

Նամակի երկրորդ թեզը Մեասնիկեանի կառավարութեան հետ գործակցելու մասին հարցադրումն է: Թումանեանն ուղղակի թելադրանք չի անում, բայց քանի անգամ կրկնելով, շեշտում է գործակցութեան անհրաժեշտութիւնը: «Նախագահ Մեասնիկեանն ու իր ընկերները արժանի են ամէն գովասանքի եւ աջակցութեան»: «Ամէն կողմից պիտի նրանց սիրեն ու գործակցեն»: «Հէնց նրանց հետ գործակցելու համար էր, որ հարաբերել էինք Երեւան եւ կազմեցինք Հայաստանի օգնութեան կոմիտէն»:

Պիտի զարմանալ չենք, որ Չոպանեանը հանդէս գալով մամուլում, ճիշտ թումանեանական բառամթերքով կոչ է անում ամբողջ հայութեանը «գործակցելու» առանց քաղաքական խտրականութեան, բոլոր այն ուժերի հետ, որոնք ատակ են օգտակար լինելու ժողովրդի փրկութեան հարցում:

Այնուհետեւ, խիստ կարեւոր է Թումանեանի յատուկ նշումը կոմիտէի կարգավիճակի մասին. «Կոմիտէն անկուսակցական է եւ չեզոք, երկրի մէջ գործելու է ազատ ու արտօնելու եւ իր միւլերը կունենայ բոլոր գաղութներում»: Եւ սրան հետեւում է հայ ժողովրդի միասնութեան

անհրաժեշտութեան միտքը, որը մատուցում է իր անունով, անձնաւորւած: Յայտնում է, թէ յանձն է առել, քանի որ. «Ասում էին եւ պնդում, որ իմ անունը իբրեւ թէ կօզնի հաշտութեան եւ ընդհանուր համերաշխութեան գործին: Սրա համար, հարկաւ, ես ոչ միայն անունս, այլ շատ անելի բան կը տայի»:

Այս նամակը, որը յայտնի է դառնում ՌԱ կուսակցութեան ղեկավար շրջանակներին, փաստօրէն Թումանեանի Պոլիս այցելութիւնը նախապատրաստելու դեր է ստանում, մանաւանդ որ նամակի մէջ այդ մասին յայտնում էր: ՀՕԿ-ի կոչի պահանջներին համապատասխան, հայ ազգային կուսակցութիւնների, 43 միութիւնների եւ մամուլի ներկայացուցիչները հոկտեմբերի 24-ին հիմնում են «Հայրենիքի օգնութեան մարմին» (ՀՕՄ): Սփիւռքի պատմութեան մէջ սա առաջին համազգային կազմակերպութիւնն է, որը ստեղծել է գործում է Թումանեանի բանաձեւած վերկուսակցական, բացառապէս ազգային սկզբունքով, որն ապահովում էր տարբեր քաղաքական ուժերի միասնութիւնը:

Պոլսում Թումանեանը ծաւալում է հայրենասիրական, մշակութային լայն գործունէութիւն: Ունենում է բազմաթիւ հանդիպումներ եւ ելոյթներ, հիմնադրում է «Հայ արեստի տուն»: Այդ ուղեւորութեան մասին Թումանեանին ընկերակցող Երուսաղէմ Թադիանոսեանը, որը ՀՕԿ-ի անդամ-քարտուղարն էր, ՀՕԿ-ի համագումարին տւած իր հաշիւ-տրութեան մէջ գրում է. «Պատմիակների Պոլիս գնալը հիշատի հարթեց շատ արգելքներ մեր եւ արտասահմանի նորմալ յարաբերութիւնները սկսելու տեսակէտից, վերացրեց շատ թիրիմացութիւններ եւ վերջ դրեց անհեթեթ լուրերի ու առասպելների Հայաստանի ներքին դրութեան մասին»:

Ամենակարեւորը, սակայն, ՀՕՄ-ի ատենապետ դոկտոր Վ. Ալբունեանի հետ Յովի. Թումանեանի ստորագրւած փաստաթուղթն է: Սա, փաստօրէն, առաջին վաւերագիրն է, որ ստորագրւած է Հայաստանի եւ սփիւռքի պաշտօնական, թէպէտ հասարակական կարգավիճակով, մարմինների միջեւ: Փաստաթղթի մէջ ասւած է. «Մենք համոզւած ենք, որ ծրագիրը գործած են արեւմտահայերը Պոլսոյ մէջ եւ արեւելահայերը Հայաստանի մէջ, պիտի դառնայ օրակարգը բոլոր հայերում, ուր որ ալ գտնուած ըլլան անոնք: Ինչքան ալ զարափարակական ըլլայ պայքարը գործազան կուսակցութիւններ, նոյնիսկ յանուն Հայաստանի բարոքութեան, յանուն հայ ժողովուրդի երջանկութեան, այնքան մոլեգօրէն կը մղեն իրարու դէմ, պէտք է դադարի այդ պայքարը հոն, ուր մեծ օրակարգը կը սկսի- Հայաստան եւ հայ ժողովուրդը: Մենք հոս եւ Հայաստանի մէջ հաստատւած ենք ներդաշնակ համագործակցութեան կատարելիութիւնը, կարգը արտասահմանի մը»:

Յովի. Թումանեանը կարեւոր տեսակցութիւններ է ունեցել ՀՅԴ, ՌԱԿ եւ ՄԴՀԿ Պոլսի ղեկավար մարմինների հետ: ՀՕԿ-ի ընդհանուր ժողովրդին հասցէագրւած իր պաշտօնագրում նա նշում է այդ կուսակցութիւնների դրական վերաբերմունքը: Իսկ ՌԱԿ-ի ՀՅԴ-ի ներկայացուցիչների հետ «որոշ կէտեր պարզելուց յետոյ- երկու կուսակցութիւնն էլ շրջաբերականով ազդարարեցին իրենց ամէն տեղ գտնող ճիւղերին անվերապահօրէն մօտենալ ու նպաստել Հայաստանի օգնութեան գործին ու մարմիններին»: ■

Իսրայելը փորձում է տիրանալ Երուսաղեմի հայկական կալվածքներին

Իսրայելի արտգործնախարարի տեղակալ, Քնեսեթի անդամ ՆաևաՖ Սասսալաիը Երեւանում հանդիպեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանին, ԱԳՆ նախարար Վարդան Օսկանեանին, փոխարտգործնախարար Լեւոն Սկրտչեանին: Հանդիպումների ընթացքում քննարկել է Հայաստան-Իսրայել փոխյարաբերությունների ներկայ մակարդակը. կարելու է փոխշահաւէտ տնտեսական համագործակցութեան հետագայ զարգացման անհրաժեշտութիւնը: Հանդիպումների ընթացքում քննարկել են Սերժաուր Արեւելքի ներկայ իրադրութեան համատեքստում Երուսաղեմի հայկական թաղամասին վերաբերող հարցեր:

Երուսաղեմի հայկական կալվածքների խնդրին է անդրադարձել էլեկտրոնային թերթի թղթակից Ալեքսանդր Գուլդերգը:

Բանակցութիւնների գլխատըր թեման եղել է մերձատրաբելեան ճգնաժամի կարգաւորման, մասնատրապէս աշայէս կոչւած «հայկական ասպէկտը»: Վերջինիս քննարկում տակ նկատի է առնուում Երուսաղեմի հայկական թաղամասի ճակատագիրը:

Հայկական թաղամասը գտնուում է Երուսաղեմի հարաւում եւ փաստօրէն վերահսկուում է Երուսաղեմի հայոց պատրիարքութեան կողմից:


Հայկական թաղամասի ճակատագիրը չափազանց կարեւորում է Երուսաղեմը հրեաների եւ պաղեստինցիների միջեւ բաժանելու առումով: Այս հարցը քննարկել է նաեւ Նիւ Եորքի «Հազարամեակի գագաթաժողովի» շրջանակներում Ռոբերտ Քոչարեան-Եասեր ԱրաՖաթ հանդիպման ընթացքում: Պաղեստինի առաջնորդը ՀՀ նախագահին յիշեցրել է, որ «հայ եւ պաղեստինցի ժողովուրդները յանրժամական եղբայրներ են եղել», եւ անթոյլատրելի է Հայկական թաղամասի թուլացումը: ԱրաՖաթի խօսքերը ատելի շուտ խնդրանք-պահանջ էին՝ Հայկական թաղամասը մտցնելու Երուսաղեմի պաղեստինեան հատուած: Նման դիրքորոշումը, ինչպէս ցոյց տուեց իրադարձութիւնների հետագայ ընթացքը, բացարձակապէս չի համապատասխանում Իսրայելի շահերին, որը նպատակ է դրել իր գերիշխանութեան տակ պահել Հայկական թաղամասը, փաստօրէն տիրանալ Հայ առաքելական եկեղեցու կալվածքներին:

Պաշտօնական Երեւանը եւ Հայ առաքելական եկեղեցու բարձրագոյն սպասարները հրաժարուում են կոնկրետացնել իրենց դիրքորոշումը Երուսաղեմի հայկական կալվածքների ապագայ ճակատագրի շուրջ:

Պիտի նկատի առնել, որ խնդիրը զուտ Երուսաղեմի հայկական կալվածքները չեն, այլ, որպէս հետեւանք, տարածաշրջանի երկրների փոխյարաբերութիւնները:

Նախ պէտք է նշել, որ Հայաստանի եւ Իսրայելի իրաքանչիւր շփում արժանանում է հարեւան Իրանի խիստ բացասական արձագանքին: ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանեանի 1998թ. Թել Աւիւ այցը քիչ էր մնում սառեցնել Թեհրան-Երեւան գործընկերային փոխյարաբերու-

թիւնները: Այսօր Իրանը եւ Հայաստանը շատ հարցերում գործընկերներ են: Մինչդեռ Երեւանը յենելով իր որդեգրած արտաքին քաղաքականութեան «կոմպլեմենտար» սկզբունքին, զարգացնում է յարաբերութիւնները Իրանի հետ, միաժամանակ Իսրայելին առաջարկում քաղաքական երկխօսութիւն: Դիտորդների կարծիքով, Երեւան-Թել Աւիւ շփումների արդիւնքում ԱՄՆ Կոնգրեսի ազդեցիկ հայկական եւ հրեական լոբբիները հաշուել են, որն իր հերթին հնարաւորին է տալիս առաւել արդիւնաւէտ պաշտպանել հայկական շահերը:



Միւս կողմից, չպէտք է չնկատել, որ Իսրայելի եւ Հայաստանի բացայայտ մերձեցման հակումները խիստ դժգոհութիւն են առաջացնում Անկարայում: Ինչպէս Հայաստանը եւ Իրանը, այնպէս էլ Իսրայելը եւ Թուրքիան ռազմավարական դաշնակիցներ են: Անկարային յատկապէս վրդովեցրեց բարձրաստիճան հրեայ դիւանագետի հանդգնութիւնը, որը Երեւանում ծաղկեպսակ դրեց 1915-1923թթ. Օսմանեան Թուրքիայի իրականացրած Ցեղասպանութեան զոհերի յուշարձանին:

«Ազգ». Մեր կարծիքով, Իսրայելի կառավարութեան երկու անդամների կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, ինչպէս նաեւ հրեայ որոշ քաղաքական գործիչների ու մտաւորականութեան ներկայացուցիչների «հայամեա» դիրքորոշումը եւս պէտք է դիտարկել Երուսաղեմի հայկական կալվածքների ապագայ ճակատագրի ենթատեքստում: ■

Ցեղասպանութեան... Շար. էջ 7-ից

Այլ 30,40-ական թերուն ալ ձմեռները շա՛տ սոսկալի էին, ոչ մի համեմատութիւն հիմնկալաւ հետ...:

Մեր կողմերն ալ մարդ-մարդազանք քիչ կար. օձ, կա-րիւ, մուկ, ի՛նչ քսեւ՝ կար...

Ինչ երկարացնեն, գացի ճակատ, ողջ, առողջ ետ էկայ...

1960-ական թիւերում մարդ մը էկաւ Մալաթիայէն եւ ըսաւ որ հոն հարիւր յիսուն հայ ընտանիք կայ, կուզեն փոխադրուիլ Հայաստան: Հայաստանը թոյլ չտուեց, ըսաւ՝ թուրքը չի թոյլատրում: Եթէ նրանք փոխադրուեն մի ուրիշ երկիր, օրինակ՝ Ֆրանսիա կամ Գերմանիա, յետոյ՝ անտեղէն կորուցանք բերել տալ: Բայց ադ ալ դիւրին բան չէր, այնպէս որ Մալաթիայի հարիւր յիսուն հայ ընտանիքն ալ ցիր ու ցան էղան, մէկը՝ Ամերիկա, մէկը՝ Անգլիա, մէկը՝ Ֆրանսա ցրեցաւ: Հիմա Մալաթիայում քիչ՝ հատ ու կենտ են մնացել հայերը:

Ասկէ քսան տարի առաջ, 1970-ական թիւերում էր նամակ մը էկաւ, գրած էր. «Ես Ռիզան եմ. Կորուջուխի Հուսէինի տղան եմ, կարո՞ղ է դուք Գրիգորն էք, Յովհաննէսի տղան: Կուզեմ գտնել Ձեզ: Հայրս՝ Հուսէինը, մեռնելէն առաջ խնդրեց, որ Ձեզ գտնամ»: Մարդու միջոցով մեր հասցէն դժուարութեամբ գտել էր ու այդ նամակը ուղարկել:

Այնպէս որ թուրքերում մէջը ալ լա՛ւ մարդիկ կան: Պապայիս վեց-եօթը տարի անոնք պահել էին, ետքն ալ կապը չէին կտրած...

Հիմա աղբբեջանցիներում մէջը լաւ մարդիկ չկա՞ն, կան Սունգայիցում չկա՞ն, կա՞ն, լաւ մարդիկ ալ կա՞ն... ■

Մշակոյթ

Արտագ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

Յարգելի ընթերցող, մեր համակարգչի ծրագրի խանգարման պատճառով թերթիս համար 28-ի էջ 12-ում «Արտագ-Մակու» յօդուածում վրիպում է տեղի ունեցել: Ուստի խնդրում ենք այդ էջի վերջից կարդալ նախ հետեւեալ բաժինը՝ այն միացնելով համար 29-ի էջ 10-ում տպագրուած նոյն յօդուածի շարանին:

Չտպագրուած բաժին

Չաքարիա եպիսկոպոսի ու իր եղբայր պարոն Պետրոսի ձեռքում է գտնուել Արտագի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնը: Մրանց համատեղ ջանքերի շնորհիւ է, որ կառայցներով ամբացում է իրենց գերդաստանի աշխարհիկ նստավայր՝ Մակի բերդը, փառահեղ կամուրջներով եւ այլ շինութիւններով կարգի է բերում իրենց իշխանութեան միջով անցնող կարաւանային ճանապարհը եւ հիմնում նոր հոգեւոր կենտրոններ: Չաքարիա եպիսկոպոսի անան հետ է կապում Ծործորի վանքի հիմնադրումը: Չաքարիան իր կուսակից նշանաւոր մատենագիր Յովհաննէս Ծործորեցու համագործակցութեամբ, այստեղ բարձրագոյն դպրոց է բացել եւ պայմաններ ստեղծել գիտամանկավարժական աշխատանքների ծաւալման համար: Անցեալ դարի 80-ական թուականների տեղեկութիւնների համաձայն Չաքարիան եւ իր եղբայրը Մակու գետի վրայ 1318-1328 թականներին սրբատաշ քարերով կառուցել են չորս կամարակապ կամուրջներ: Այդ կամուրջներից մնացել է միայն մէկի որոշ մասը կառուցողական ընդարձակ արձանագրութեամբ: Կամուրջը կառուցուած է եղել Մակից 2 կմ. հեռաւորութեան վրայ եւ ունեցել է եօթ կամարներ: Չաքարիա եպիսկոպոսի միջոցով է բացել կապի կոչող կիրճը, որ գտնուում է Ս. Թադէի վանքի եւ Մակի միջնամասում: Կիրճը բացել է «Թուանքչի լեռան շրթայածայրը պատահելով»։ այս հսկայ աշխատանքի մասին հանդիպակաց ժայռի վրայ փորագրուած է մի արձանագրութիւն, որից վերծանուել են ՉԿԷ (1318) թականը եւ «իշխանութեամբ տէր Չաքարիա» բառերը: («Արարտ» 1896 էջ 587-588)։

1319թ. Արտագի շրջանում տեղի է ունենում երկրաշարժ, որի հետեւանքով ըստ մեզ հասած տեղեկութեան տուժում են վանքը եւ շրջանի գիւղերը. «Ի ՉԿԷթ. եղև ահագին շարժ յարեւելս. եւ զեկեղեցին կործանեաց՝ եւ գտունսն փլոյց եւ ՀԵ ոգի եսպան, գոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին եւ զվանքն տէր Չաքարէ: Այլև ի Գեղարքունի ընկղմեաց գրագում գեօղս հանդերձ արամբք եւ յայլ եւս տեղիս» (Մամուլ քահանայի Անեցոյ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» Վաղարշ 1893 էջ 157)։

Չաքարիա եպիսկոպոսի կառուցողական ջանքերի շնորհիւ տաս տարւայ ընթացքում վերաշինուում է վանքը եւ այդ առթիւ վանքի հիւսիսային որմի վրայ երկաթագիր խոշոր տառերով փորագրուում է հետեւեալ արձանագրութիւնը. «Այս տաճար լուսակերտ եւ երկնաման ամկայացեալ հաստատագոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ շիրմի Սուրբ Առաքելոյս Թադէոսի, որ ըստ բազ-

Սերոժ Թիլիմեան

մատեսակ յանցանաց մեր գկործանումն է առ ի շարժ: Իսկ եւ նուսատ սպասաւոր նմին Չաքարիայ եպիսկոպոս, որդի պարոն Մանւէլայ, կարողութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութեան առաւել քան գառաջինն, ի ժամանակի սաստիկ նեղութեան եւ հալածանաց քրիստոնէից, որ եւ բազում եկեղեցի քակտին, վասն որոյ արձանագրեցաք գլիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին այն եւ անարին զեմման գառինն Աստուծոյ հանդերձ ծնողօք եւ զարմիւք, եւ զաջորդն մեր աղբար որդին գտէր Տիրացուն, այլ եւ զհարազատ եղբայրս մեր զՊետրոս եւ զՄարգիս, որք ըստ կարողութեան նպաստաւորք եղեն ընչիւք: Կատարումն Թ. ՉՀԸ(1329)»:

Մեծ հաւանականութեամբ Չաքարիա եպիսկոպոսի եւ պարոն Պետրոսի միջոցով կառուցուել են այլ շինութիւններ եւս: 17-րդ դարից վկայութիւն ունենք Կառնուտի կոչող ջրմուղի մասին, որ «յառաջ ժամանակս բերեալ էր Չաքարիա եպիսկոպոսն՝ պարոն Էմանուէլի որդի»։ (մատենադարան ձեռ. Կօ. 808, էջ 489ա)։

Շար. համար 30-ից

Գրիսրուլաղ (քառասուն աղբիւր) - Թադէի վանքից հարաւ, կէս ժամ հեռաւորութեան վրայ է գտնուում. 1901 թականին ունէր 40 տուն հայ բնակչութիւն. գիւղի տէրը՝ քիւրդ բէյը տաճկական մի կռի մէջ սպանուում է. նոյն թականին, Մակի թուրք գիւղացիները թափում են Գրիսրուլաղ՝ աւարի մատնում գիւղը. հայ գիւղացիները ըստիպուած գաղթում են Կովկաս ու Արեւմտահայաստան. այս դէպքից յետոյ գիւղում մնում են միայն 7տուն հայեր:

Գիւղում գտնուում են բազմաթիւ աւերակներ՝ բոլորն էլ գետնին հասաւար, եղել է մի քարաշէն եկեղեցի՝ մի մասը հողից դուրս ցցուած, կիսաջնջուած խաչքարեր. գիւղի վերելք գտնուող ապառաժի վրայ բերդի պարսպի հետքեր են եղել եւ դէպի բերդը տանող ճանապարհի հետքեր: Եղել են նաեւ այլ եկեղեցիներ, որոնք թաղուած են անբողջովին հողի տակ: Մնացած է եղել նաեւ գերզմանատան մի մասը, գերեզմանաքարերի գրութիւնները քիչ եւ դժար ընթեռնելի:

Քիլիստբեղնի- Գիւղը գտնուում է Աւաջուղ գաւառակում, ուր նստում էր Աւաջուղի խանը, այլ խօսքով գիւղը գաւառակի կենտրոնն էր: 20-րդ դարի սկզբին արդէն զրկուած էր հայութիւնից: Գիւղը իր անունը ստացել է իր մէջ գտնուող հայկական եկեղեցուց. եկեղեցու վարի նկարագրութիւնը տրուել է դարի սկզբին, 1902 թ. «Մուրճ անսագրի ֆօ. 12-ում. յօդածագիր Կ. Փաշայեանը գրում է. «մինչեւ այժմ կիսաւեր կանգուն է մնում: Եկեղեցին բաւական մեծ է եւ շինուած է ներսից ու դրսից սրբատաշ մեծ քարերով, որոնց մէջը լցրել են կիրի, մանր քարերի եւ աղիսի կտորների մի շաղախուած, որ քարացել է ամրացել է. եկեղեցու առանց սիւնի գմբեթը նոյնպէս ներսից ու դրսից կորացրած սրբատաշ քարերով է շինուած, հիանալի

Մշակոյթ

ճարտարապետութեամբ. այնպիսի մեծութեամբ քարեր են շարած, որոնք փոխադրելու համար 40 լուծ եզ կամ գոմէշ է հարկաւոր, իսկ բարձրացնելու եւ զմբեթը կազմելու համար կրկնապատիկը հազիւ բաւականանայ: Եկեղեցու չորս պատերը եւ զմբեթի մի մասը կանգուն են մնում. զմբեթի մեծ քարերը օդի մէջ ճօճում են առանց վայր ընկնելու: Դժբախտաբար ոչ մի արձանագրութիւն չկար, միայն գիւղից 10 թուղէ հեռու դաշտի մէջ գտնուած հայկական գերեզմանատան քարերի վրայ կարդացում են անուններ եւ յիշատակութիւններ»: Յօդածագիրը այնուհետեւ տեղին աւելացնում է. «Երեւի այդ եկեղեցին կամ մի վանք է եղած եւ կամ այդտեղը մի մեծ քաղաք, որովհետեւ դժար թէ մի գիւղ այդքան հոյակապ, մեծածախս եւ ճարտարութեամբ մի եկեղեցու մասին մտածէր: Նրա անունը եւս մեզ անձանօք է»:

Դարաշամ- Գտնուում է նոյնանուն գաւառակում, Նախավկայի վանքից կէս ժամ հեռաւորութեան վրայ դէպի արեւմուտք, իսկ Արաքսի աջակողմեան վտակ Կարմիր գետի գետաբերանից 4-4.5 կմ. արեւելեան հարթավայրում, որի շուրջը տարածուած են ճահիճներ եւ կան մի քանի փոքրիկ լճակներ: Այստեղ է գտնուում Արաքսի ամենայարմար գետանցը: Ըստ արանդութեան ունեցել է 700 տուն բնակիչ, իսկ դարասկզբին 22 տուն: Գիւղում կայ քարաշէն մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին 16-րդ դարի շինութիւն: Գիւղից ոչ հեռու Նախավկայի վանքն է. գիւղի բնակիչները 1928-ին եւ 1946-ին ամբողջութեամբ գաղթել են Հայաստան: Այժմ Դարաշամը անբնակ է: Նրա շուրջը գտնուում են չորս հատ եկեղեցու անբնակներ. գիւղից դէպի արեւմուտք ու հարաւ գետեզերքի հետ շարունակուում են կցկտոր անբնակներ: Պահպանել են գետի ափի եկեղեցին եւ նրա շուրջը ցրած տների հիմքերը, իսկ մի քանի հարիւր մետր հարաւ, լեռան ստորոտում գերեզմանոցն է: Եկեղեցին ունի խաչքարեր եւ վիմագիր արձանագրութիւններ: Վանքից մինչեւ երեք ժամ հեռաւորութեան վրայ չորս տեղում չորս հատ քարաշէն եկեղեցիներ կան դեռեւս կանգուն, որ միեւնոյն ժամանակաւայ շինութիւններ են, որոնցից մէկը գողերի Վարմագիր գիւղումն է: Նոյն եկեղեցու նման կայ Խոյնի մօտիկ Մահլազան գիւղում: Նոյն շրջանում Դարաշամ անունով կար երեք գիւղ, որոնք ստացել էին Ստորին, Միջին եւ Վերին Դարաշամ անունները, որոնցից Ստորինը կամ Ներքինը նոյն Դարաշամ գիւղն է: Երբեմն Դարաշամը նոյնանուն են նրանից ոչ հեռու գտնուող Խրամ քաղաքի հետ: Դարաշամը հարուստ է այժեաններով, որոնք խմբերով ման են գալիս:

Դարաշամը կոչւել է նաեւ՝ Բաշքեանդ, Դալաշամբ, Դալաշէն, Դարաշամբ, Շամբ, Շամբիճոր, Տարաշամբ:

Տնայատ- Մասսի ստորոտում, քրդաբնակ գիւղ է, ուր ըստ բանաւոր զրոյցների հիման վրայ եղել է Արշալուան քաղաքը:

Գլմիշթափ- Եղել է հայաբնակ. Մակից 1.5 ժամ 7-8 կմ. դէպի հիւսիս-արեւմուտք հեռաւորութեան վրայ. 20-րդ դարի սկզբին 70 տուն հայ բնակչութիւն է ունեցել: Գիւղի վերեւում գտնուող բլրակի վրայ եղել է մի եկեղեցի: Գիւղը ուներ մի դպրոց եւ վարժապետ:

Փառախոսիկ- Հայաբնակ գիւղ էր, Գլմիշթափէից վերեւ. կան անբնակներ. դէպի Մակու կայ մի անցք, ուր գտնուել են մի ճգնաւորի մատուռն ու այրը: Հայոց գերեզմանատան եւ եկեղեցու անբնակներ են եղել 20-րդ դարի սկզբին:

Քիշմիշթփ- Մակից 3 ժամ հեռաւորութեան վրայ: Դարասկզբին ունեցել է 80 տուն հայ բնակիչ, եկեղեցի եւ խղճուկ դպրոց. 1918թ. ամռան թրքական կոտորածի հետեւանքով զրկւել է հայութիւնից: Գիւղը 90-ական թականներին պատկանում էր Ի-սաղ Փաշա խանին: Համաշխարհային պատերազմից առաջ սրա որդիների Հիւսէյնլուի խանի ու Այպարխանի ժառանգները իրար մէջ բաժանել էին Քիշմիշթփէի ծխերն ու մարդկանց: ■



Շար. 7

Յայտարարութիւն - Ազդ

Ս. «Թաղէի» վանք ուխտագնացութիւն կազմակերպող միութիւնների, թուրքի եւ ուխտաւորների խիստ ուշադրութեանն ենք յանձնում հետեւեալ նկատառումները.

1. Մանուկում տպագրուող Չեր յայտարարութիւններին զուգահեռ, պաշտօնական գրութեամբ դիմել Թեմա-կան Խորհրդին՝ պատասխանատու ներկայացնելով:

2. Վանքում որեւէ ձեռնարկութիւն՝ առ ու ծախս, հաւաք, անպաշտօն հանգանակութիւն խիստ արգելուում է, առանց Թեմական Խորհրդի արտօնութեան:

3. Վանքում՝ ուխտատեղու պատշաճութիւնները յարգել եւ խուսափել ոչ քրիստոնէական երեւոյթներից (անվայել՝ գգեստ, կեցածք, ալկոհոլիք խմիչքների օգտագործում, օտարամուտ սովորութիւնների կիրառում եւ այլն):

4. Թեմական Խորհուրդը Վանքում եւ Թարիզում իր հսկողութեան տակ ունի ուխտագնացութեան «Գործադիր» յանձնախումբ եւ «Կարգապահական» կազմ, որոնց հետ համագործակցութիւնը խիստ անհրաժեշտ ենք գտնում՝ նախքան ուխտագնացութիւնը եւ ուխտագնացութեան ընթացքում:

5. Վանքի Տաճարում կրօնական բոլոր արարողութիւնների ընթացքում խուսափել աներող աղմկից եւ խուճապ ստեղծելուց:

6. Մատաղի համար՝ միայն նախապէս նկատի առնելով վայրում կատարել՝ հեռու Վանքի շրջապատից եւ ուխտաւորներից:

7. Վանքում խիստ անհրաժեշտ է մաքրութիւնը՝ իր գանգազան իմաստներով:

8. Թեմական Խորհուրդը միայն պատասխանատու է պաշտօնական թականում կազմակերպուած ուխտագնացութեան (3 օր, հինգշաբթի- 26 յուլիսի առաւօտեան լուսաբացից մինչեւ շաբաթ- 28 յուլիսի երեկո-յեան ժամը 6-ը):

9. Վրանների, կանգառների, շտապ օգնութեան, մոմակաճառութեան, կարգապահութեան եւ այլ հարցերի համար Վանքում դիմել համապատասխան պատասխանատուներին:

Յարգանք՝
Դիւան Թեմական Խորհրդի
Ատրպատականի Հայոց Թեմի

Ո՞ւր էր Յիսուսը 13-ից 30 տարեկանում

Այս գրութիւնը գրել է հնդիկ գիտնական Սուրաթ Կումար Սարկարի կողմից եւ տպագրել է «Սթէյքս-ման» թերթում 1936 թ. դեկտ. 13-ին : Բնագրից մէկ օրինակ, մեքենագրւածը տրւել է հանգուցեալ հօրս՝ Տէր Աւետիս քին. Եղգարեանին՝ Մաղրասում 1948-50 թթ. որը գտել են վերջերս իր արխիւից եւ թարգմանել հայերէնի:

Հովիկ Էղգարեան

Մի Տարօրինակ Հնդկա-քրիստոնէական Վարք սրբոց

Սուրաթ Կումար Սարկար

Իսկապէս շատ տարօրինակ կը լինէր, եթէ մենք տեղեկութիւններ չունենայինք Յիսուս-Քրիստոսի 13-30 ապրած տարիների մասին: Աւետարանում դժբախտաբար դրան չենք հանդիպում: Ուստի, բնականաբար հարց է ծագում՝ որտե՞ղ էր նա այս 17 տարիներին եւ ինչպէ՞ս անցաւ նրա կեանքը այդ ժամանակաշրջանում:

Հետաքրքիր է՝ որոշ հազուագիտ հնդիկներ, կամ բողոքաբան Ծասքաներ պնդում են, որ նա եղել է Հնդկաստանում եւ այնտեղ է անցկացրել այդ 17 տարիները: Մա նոր յայտնագործում է: Նախա Նօմավալիում գոյութիւն ունի մի շատ հին ձեռագիր, կնքւած եւ ապահով պահպանւած Եօզիսայի մի բաժնի կողմից, որ կոչւում է Նաթա Եօզիս: Այս գրքում նաեւ ասուած է, որ իր յարութիւնից յետոյ նա կրկին եկաւ Հնդկաստան եւ բարուք վիճակ տեսնողներ այս Եօզիսների համար:

Քրիստոսի ծննդից շատ ժամանակ առաջ, Պաղեստինում կար մի սրբերի դասակարգ, որը գրեթէ Հինգու Եօզիսի նման էր: Նրանք կոչւում էին «Էստներ»: Արթուր Լիլին գրում է իր «Հնդկաստանը իր նախնական Քրիստոնէութեամբ» գրքում, որ Յիսուսը եղել է Էսէն եւ Հնդկական Եօզիսի նման փնտրւած, որ ձեռք բերեց Աստուածային Միութիւն եւ հոգեկան ուժերը (ձիրքերը) մեկնակեցութեան մեծարանքը՝ մեկուսանալու վայր: (Փի 2000) Էսէնը օտար ենչիւնն է Հնդկերէնի « Իշանի», Իշանը Շիւս է, կամ Շիւսի:


Յովհաննէս Մկրտիչը

Նախա Բօմիւնիքի Իշանիների եւ Եօզիսների պաշտամունքի ձեւերը շատ իրար նման էին: Յովհաննէս Մկրտիչը մի Էսէն էր. նա Նախա Բօմիւնիքի մարդկանց մօտ վայելում էր բարձր պատիւ: Մինչեւ անգամ Բենգալին առնչութիւն չունեցող, Յովհաննէսը մկրտեց Յիսուսին:

«Մտուգաբանողների մէջ չկայ ընդունւած տեսութիւն «Էսէն» բառի մեկնաբանութեան համար. ինչպէս սեքքի բնագիրը ճանաչւած չէ»:

«Էսէն» բառի նմանութիւնն է «Գուռու»ն («Բրահմի-նիզմի հոգեկան վարպետները»):

Յիսուսը յիշատակւած էր Հնդկական Եօզա կրօնական ձեւի մէջ: Առարկաների մէջ առաւել գիտութիւն Ծա-



հելու համար նա եկաւ Հնդկաստան: Մա համապատասխան է մի շատ հին ձեռագրի բովանդակութեանը, որը պահպանւում է Մարբուր տաճարում, Թիբետի մի շատ անհասանելի շրջանում: Տարիներ առաջ ռուս տուրիստ Դր. Նօթուիզը սահեց Հիմիսի մօտակայքում մի բլուրից եւ շատ լուրջ վիրաւորեց: Բարի Լումասը տարաւ նրան Հիմիս Թէմպլը: Այստեղ նա գտնում է մի գիրք, Յիսուս-Քրիստոսի մասին: Նա փոխ առնելով Լումասից այդ գիրքը թարգմանում է Անգլերէնի: Այս թարգմանութեան հիմքում, նա աւելի ուշ գրեց մի գիրք Ամերիկայում, որ կոչւում էր «Յիսուսի անճանաչ կեանքը»:

Ամերիկեան կառավարութիւնը ենթադրեց, որ այդ գրքում մեջբերումներ կան, որոնք արգելում են անմարդկային հարուածը՝ Քրիստոնէութեան համայնքի դէմ: Ուստի, գրքի թարգմանութիւնը արգելեց:

Մարբուրի բնագիրը գրած է Պալի լեզուով, մինչդեռ՝ Հիմիս տաճարի գիրքը Թիբետերէն թարգմանութիւնն է: Դրա էջերից մենք տեղեկանում ենք, որ 13 տարեկանում Յիսուսը եկաւ Հնդկաստան: Մուամի Աբեդուանանդ՝ Շրի Բանկիշնա Վեդնթա կազմակերպութիւնը տեսել է գիրքը եւ թարգմանել նրա մի մասը: Մուամի Աբեդուանանդ եւ Թիբետեան Լամասը այն կարծիքին են, որ գիրքը գրւած է երեք կամ չորս տարի Յիսուսի խաչելութիւնից յետոյ: Դրա հակիրճ եւ համառօտ թարգմանութիւնը հետեւեալն է.

Երբ Յիսուս (Իշան), դարձաւ 13 տարեկան, հիանալով նրա գիտութեամբ եւ հարուստ ժողովրդականութեամբ՝ երկրի Կուլինասներն ցանկութիւն յայտնեցին իրենց աղջիկներին անուսնացնել նրա հետ, բայց Յիսուսը մտադիր չէր ամուսնանալու: Ամուսնութիւնից հրաժարելու պատճառով նա թողեց իր հօր տունը: Նա եղաւ փափագողը՝ հասնելու կատարելագործման, արժանանալ բոլոր արժանիքներին, որոնց նախկին Բուրդաները փափագել էին: Նա 14 տարեկանում հասաւ Արիանց երկիր: Ձէյնգեները, որ շատ գրաւիչ էին իրենց մարմնի զգաստութեամբ՝ դիմեցին նրան՝ իրենց հետ ապրելու խնդրանքով: Նա չհամաձայնեց այս դիմումներին եւ չցանկացաւ որեւէ մէկի շնորհը:

Հետագային նա հասաւ Ջազանաթա Դհանա (Պուրի) եւ եղաւ Բրահմաների մեծ ուսանող (Մարկուագ) եւ սկսեց ուսանել եւ թարգմանել Վարդասը եւ Ծասգրասը:

Շար. էջ 18-ում

Նոր ուղղագրութեան ամենակարեւոր կանոնները

Քառերի գծիկով եւ անջատ գրութիւն

Յարադրական բարդութիւնների բաղադրիչների միջեւ գծիկ է դրուում հետտեւեալ դէպքերում.

1. Երբ բառը կրկնուում է անփոփոխ կամ հնչյունափոխւելով.

արագ-արագ, բարդ-բարդ, շտապ-շտապ, զույգ-զույգ, տեսակ-տեսակ, կամաց-կամաց, մեծ-մեծ, մանր-մուր, ոլոր-մոլոր, աման-չաման, քաղցր-մեղցր, լեփ-լեցուն եւ այլն:

Երբ կրկնատր բարդութեան բաղադրիչներից մէկը քարացած (հին հայերէնին յատուկ) քերականական ձեւ է, այդ բարդութեան բաղադրիչները գրուում են միասին.

բերբնեբերան, ամսեամիս, տնետուն, տարեցտարի, ծայրեհծայր եւ այլն:

Եթէ կրկնատր յարադրական բարդութեան թեքած բաղադրիչի հոլովական իմաստը գիտակցուում է, ապա այդ բաղադրիչները գրուում են անջատ, առանց գծիկի.

ուս ուսի, մեջք մեջքի, ձեռք ձեռքի, կողք կողքի, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, երկրից երկիր եւ այլն:

2. Այն յարադրութիւններում, որոնց բաղադրիչները պատկանում են միեւնոյն խօսքի մասին, պահպանում են իրենց յարաբերական անկախութիւնը, լրացնում են իրար եւ բնութագրում առարկան տարբեր կողմերից.

սպի-մշան, աղմուկ-աղաղակ, թագավոր-ամուսին, գոռում-գոչյուն, շայուն-շառաչյուն, հուշարձան-կոթող, գերի-նահատակ, երկար-բարակ, անթիվ-անհամար, այստեղ-անտեղ, հեռու-մոտիկ, տուն-թանգարան, հյուսիս-արևելք, հարաւ-արեւմուտք, այրվել-խորովվել, ասել-խոսել, ուտել-խմել, գնալ-գալ եւ այլն:

Ուշադրութիւն դարձրէք յատկապէս բայական յարադրութիւնների վրայ: Գծիկով գրուող բայական յարադրութիւնների իմաստը սովորաբար բաղադրիչների իմաստների տակական գումարը չէ, եւ կամ այդ յարադրութիւնների բաղադրիչները հոմանիշներ են (արտայայտում են իրար մօտ իմաստներ).

առնել-ծախել, գրել-կարդալ, եփել-թափել, գնալ-գալ, զուգվել- գարդարվել, ուտել-խմել, հալվել-մաշվել, աղաչել-պաղատել, անցնել-գնալ, ասել-խոսել, անել-դնել, շահել-պահել, պահել-պահպանել եւ այլն:

Միս դէպքերում, երբ բաղադրիչների կապը թռչ է արտայայտած, հնարատր է եւ յարադրութիւնների գրութիւնը առանց գծիկի.

առնել-փախչել եւ առնել փախչել վազել-հասնել եւ վազել հասնել գրել-վերջացնել եւ գրել վերջացնել

3. Քառերի այսպիսի միացութիւններում, որոնք արտայայտում են տարբեր կողմերի յարաբերութիւններ (լեզուների, ժողովուրդների եւ այլն).

Հայ- անգլերեն, անգլո-ամերիկյան, Ֆրանս-գերմանական եւ այլն:

4. Որեւէ անուցից (կամ ազգանուցից) ու Տեր, Սելիք, Միրզա, Բեկ ու նման բաղադրիչներից կազմւած անձնա-

նուններում (կամ ազգանուններում), երբ նշւած բաղադրիչներն արտասանուում են առանձին.

Տեր-Գաբրիելյան, Տեր-Պետրոսյան, Միրզա-Աւագյան, Դավիթ-Բեկ եւ այլն:

Նշւած բաղադրիչները միասին արտասանելու դէպքում գրուում են առանց գծիկի՝ միասին.

Բեկնագարյան, Միրզաբեկյան, Բալաբեկ, Սելիք-ջանյան եւ այլն:

Երբ տեր, բեկ, մելիք եւ նման քառերը յատուկ անուան հետ գործածուում են որպէս որոշիչ, գրուում են առանձին.

տեր Սահակ, մելիք Ավան, Խոսրով բեկ եւ այլն:

5. Ինչ դերանունով բաղադրւած եւ անորոշութեան իմաստ արտայայտող քառերում.

ինչ-որ, փոքր-ինչ, դույզն-ինչ

Հակադրէք միմեանց ինչ-որ անորոշ դերանունը ինչ որ շաղկապը, որը կարող է գործածուել նաեւ առանց որ բաղադրիչի.

Նրան ինչ-որ տեղ տեսել էի:

Այն, ինչ որ ինձ ասացիր, ճիշտ էր:

Այն, ինչ ինձ ասացիր, ճիշտ էր:

6. Աւանդաբար գծիկով գրուող յատուկ անուններում.

Գամառ-Քաթիպա, Նար-Դոս, Սայաթ- Նովա, Շահ-Արաս, Խնկո-Ապեր եւ այլն:

7. Թւականների այն կապակցութիւններում, որոնք արտայայտում են մօտաւորութեան իմաստ.

Հինգ-վեց (հոգի), երկու-երեք (ժամ), քսան-քսանհինգ (օր) եւ այլն:

Թւականների նոյնպիսի կապակցութիւնը գրում է առանց գծիկի, եթէ առաջին բաղադրիչն արտայայտուած է բացառական հոլովով.

երեքից չորս (տարի), քսանից քսանհինգ (օր) եւ այլն:

Առանց գծիկի՝ միասին են գրուում.

1: Յօդակապով բարդ քառերը. լեզվագրական, ռազմածովային, ուսումնադաստիարակչական եւ այլն:

2. Փոխ, էքս, վիցե, օրեր բաղադրիչներով կազմւած քառերը.

փոխնախագահ, էքսչենսիպոն, օրելյտենանտ, վիցեարեզիդենտ եւ այլն:

3. Անջատ կամ գծիկով գրուող բաղադրեալ քառերից կազմւած ածականները.

հյուսիսարևելյան, հարավարևմտյան, հեռավորարևելյան, փոքրասիական, նորգելանդական եւ այլն:

4. Այն կապակցութիւնները, որոնց առաջին բաղադրիչը որոշիչի դեր կատարող ածական կամ գոյական է. ալ կարմիր, բաց կապույտ, մուգ կանաչ, Հեռուոր արևելք, թրթակից անդամ, իսկական անդամ եւ այլն:

5. Անձի անուն եւ նրա գործունեութեան որեւէ քննադատող նշող հետադաս գոյականի կապակցութիւնը.

Թումանյան քննադատող, ԲաՖՖի պատմավիպասանը եւ այլն:

6. Օտարազգի մի շարք անձնանուններ եւ այն տեղանունները, որոնք բաղադրիչների յարաբերութիւնը հայերէնում չի գիտակցուում.

Լեոնարդո դա Վինչի, Լյուդվիգ վան Բեթհովեն, Անտուան դը սենտ Էքզյուպերի, Հարուն ալ Ռաշիդ, Հո Շի Մին

-Լյու Յորք, Բուենոս Այրես, Ալմա Աթա, Լա Մանչ, Սանտ Յագո, Սան Ֆրանցիսկո եւ այլն:

Մշակոյթ

Այնպիսիքն առանցքի խօսքի մասերի գրութեան վերաբերեալ

Ածական Անուն

Ածականի համեմատական աստիճանը ձեւաւորող *աւելի, պակաս, նազ, քիչ* բառերը ածականից առանձին են գրում:

աւելի գեղեցիկ, պակաս ազդեցիկ, քիչ հաւանական եւ այլն:

Առանձին է գրում նաեւ գերադրական աստիճանը ձեւաւորող *ամենից* բառը:

ամենից ուժեղ, ամենից քաջ

Գերադրական աստիճան ձեւաւորող *ամենա-* նախածանցը միշտ ածականին կից է գրում:

ամենահզոր, ամենաարդար, ամենամաքուր եւ այլն:

Թուական անուն

11-ից մինչեւ 99 թականների բաղադրիչները գրում են միասին:

տասներկու, քառասունչորս, հիսունութ, ինսունյոթ եւ այլն:

100-ից բարձր բոլոր բարդ թականների բաղադրիչները գրում են առանձին:

հարյուր երեսուներկու, վեց հարյուր տասնյոթ, հազար երկու հարյուր երեք, երեք միլիոն չորս հարյուր հազար վեց հարյուր չորս եւ այլն:

Կտտորակային թականների բաղադրիչները եւս գրում են առանձին:

հինգ վեցերորդ, երեք չորրորդ, երկու երրորդ

Գերանուն

Այս, այդ, այն, նոյն դերանուններից ու *քան, պէս, չափ, տեղ* բառերից կազմւած ցուցական դերանունները միշտ գրում են միացած բաղադրիչներով:

այստեղ, այդտեղ, այնտեղ, այսքան, այդքան, այսչափ, այդչափ, նույնչափ, նույնպէս, այսպէս եւ այլն:

Այդպէս է եւ *որ, ինչ* ձեւերով բաղադրւած դերանունների դէպքում:

որքան, որչափ, ինչքան, ինչպէս, որպէս, ինչպիսի եւ այլն:

Միս բարդ դերանուններից բաղադրիչների միասին գրութիւն ունեն հետեւեալները:

այսինչ, այնինչ, որևէ, ովևէ, երբևիցե, որևիցե, ոչինչ

Բաղադրիչները առանձին են գրում հետեւալ բարդ դերանունների դէպքում:

ամեն ինչ, ամեն մի, ամեն մեկը, ամեն ոք, յուրաքանչյուր ոք, մի քան, մի քանիսը, ոչ ոք մի, ոչ մեկը:

Հակադրէք միմեանց *ոչ ոք* դերանունը եւ *ոչ-ոքի* մակբայը (հաղմ ավարտվեց ոչ-ոքի):

Գծիկով դրում են միայն *ինչ-որ, ինչ-ինչ* դերանունները:

Մակբայ

Հետեւեալ բաղադրեալ մակբայների բաղադրիչները գրում են միասին. առայսօր, առհասարակ, առհա-վետ,

այսօր, այսուհետև, այնուհետև, ամսեամիս, առ-այժմ, դեռևս, նախօրոք, վաղօրոք, տարեցտարի, օրե-ցօր, օրըստօրե, բերնեբերան, դռնեդուռ, մեջտեղ, հետըզհետե, հազիվհազ, հոտնկայս, հապճեպ, գրեթե, փոքրիշատե, հկիհկ, ինքնըստինքյան, միմիայն, միամգամից եւ այլն:

Հակադրէք *միմեանց, միմեանցից* եւ *մի անգամ* ձեւերը:

Եթէ մակբայի բաղադրիչներն ունեն արտասանական որոշ անկայտութիւն եւ առանձին շեշտ, գրում են անջատ:

Ժամ առ ժամ, ըստ կարգի, ավելի ու ավելի, աջ ու ձախ, մի անգամ, մի փոքր, կիսով չափ, փոքր առ փոքր, դեմ դիմաց եւ այլն:

Բարդ մակբայը գրում է գծիկով, եթէ կազմւած է նոյն արմատի կրկնութեամբ կամ իմաստով մօտ բաղադրիչներից:

մեծ-մեծ, մեկ-մեկ, քիչ-քիչ, գիշեր-ցերեկ, փոքր-ինչ, կամա-ակամա:

Որոշ մակբայներ, նայած արտասանութեան եւ շեշտադրման, գրում են անջատ եւ միացած բաղադրիչներով:

մերթ ընդ մերթ, մեջ ընդ մեջ, դես ու դեն, իսկույն կէտ, սարն ի վեր, վերջ ի վերջո, դեմ առ դեմ, մերթընդ-մերթ, մեջընդմեջ, դեսուդեն, իսկույնկէտ, սարնիվեր, վերջիվերջո, դեմառդեմ եւ այլն:

Շաղկապ

Միացած բաղադրիչներով գրում են հետեւեալ շաղկապները:

այլև, որպեսզի, որովհետև, մինչդեռ, այնինչ, այնու-ամենայնիվ եւ այլն:

Անջատ բաղադրիչներով են գրում հետեւեալ բարդ շաղկապները:

բայց և, բայց և այնպէս, այն էլ, ինչպէս նաև, մինչև իսկ, և կամ, ապա թե ոչ, թեկուզ և, քանի դեռ, այլ ոչ թե, եթե ոչ, եթե միայն, ոչ միայն, այնպես որ, քանի որ, հենց որ, թե որ, կամ թե, ոչ թե, միայն թե, որպէս թե եւ այլն:

Վերաբերականներ

Միացած բաղադրիչներով են գրում հետեւեալ բաղադրեալ վերաբերականները:

ահավասիկ, թերևս, միգուցե, մի՞ թե, նույնիսկ եւ այլն:

Անջատ բաղադրիչներով են գրում բազմաթիւ բաղադրեալ վերաբերականներ:


Կարծես թե, կարծեք թե, հազիվ թե, ինչպէս թե, դժվար թե, երանի թե, իբր թե իբրև թե, ինչ է թե, մինչև անգամ, մինչև իսկ, ինչ խոսք, ինչպե՞ս չե, իսկապէս որ, իրավ որ, իսկ և իսկ, չլինի թե, ինչ որ է, համեմայն դեպս, ինչ էլ լինի եւ այլն:

Ուշադրութիւն դարձրէք, որ *ինչ որ է* վերաբերականը եւս գրում է առանց գծիկի: ■

Մանկական

Ինչպես պատահեց, որ նապաստակի ականջները երկարեցին

(հեքիաթ)



Մի անգամ եղնիկը իր կնոջ կողքին նստած գրոյց էր անում: Անտառում ամեն մեկն իր գործին էր: Միայն նապաստակն էր մտել թփի տակ ու ականջ էր դնում:

- Ի՞նչ էս անում այստեղ, շղիկ,- հարցնում է եղնիկը:
- Ինձ համար նստել եմ:
- Թե՛ ակա՞նջ էս դնում:
- Ասե՛նք թե՛ այդպես, Ի՞նչ կայ, որ ականջները նրա համար են, որ լսեն:

Այդ ժամանակ եղնիկը բռնեց նապաստակի ականջներին ու մի լաւ ձգեց:

Նապաստակի ականջները երկարեցին:

Այս Ի՞նչ արի՞ր,- լաց է լինում նապաստակը: Այդպես պէտք է ձգել բոլոր նրանց ականջները, ովքեր սիրում են գաղտագողի ականջ դնել ուրիշի ասածներին:

Այդ լուրն իսկույն տարածեց անտառով մէկ: Եւ եղնիկի կողքով անցնելիս՝ կենդանիները բռնում էին իրենց ականջներն ու փախչում: Իսկ նապաստակների ականջներըն այդպես էլ երկար մնացին:

Հարց: Ինչի՞ մասին քեզ ստիպեց մտածել այս հեքիաթը:

☆☆☆

Ինչո՞ր գիշերայ պահին տան իրերը ձայն են հանում

Գիշերները քնելու պահին, գիշերային լռութեան մէջ դուք միանգամից ձայներ էք լսում, որոնք կարող են այնքան բարձր լինել, որ ձեզ մտահոգեն կամ անգամ վախեցնեն: Բայց այդ ձայները շատ պարզ պատճառ ունեն: Տան մէջ գտնուող իրերը ցերեկները արեւի ճառագայթի հետեւանքով տաքանում եւ հետեւաբար ընդարձակում¹ են: Երբ գիշերը վրայ է հասնում եւ արեւի ճառագայթները մարում են, տան իրերը սառում ու հետեւաբար կծկում² են, եւ քանի որ գիշերայ պահին դրսի ձայները պակասում են եւ ամենտեղ լռութիւն է տիրում, իրերի սեղման հետեւանքով ստեղծած ձայները լսելի են դառնում:

1)

Ընդարձակել= չափը, ծաւալը մեծանալ :

2) Կծկել= ինքն իր վրայ սեղմել:

☆☆☆

Եթէ ուզում ես, որ քեզ փնթի չասեն...

Եթէ ուզում ես, որ քեզ փնթի չասեն, դու պէտք է ամեն օր հետեւես՝

մազերիդ, ձեռքերիդ եւ եղունգներիդ, ոտքերիդ, ատամներիդ, սալիտակեղէններիդ, գուլպաներիդ, կօշիկներիդ:

Մեզ կարող է թալ, թէ դա չափազանց դժուար է: Բայց ամեն օր առաւօտեան լացել ոչ-որ չի զլանում: Քիչ ատելի քեզնով զբաղելու դէպքում, դա նոյնպէս կը դառ-

նայ սովորութիւն, իսկ մաքուր ու կոկիկ լինելը բարեկիրք համարելու պարտադիր պայմանն է:

Մազերդ խնամքով սանրիր: Քո սանրը միայն քոնն է եւ ուրիշը այն օգտագործելու իրաւունք չունի:

Երբեք թաց մազերով տնից մի հեռացիր:

Երբեք թաց մազերով մի քնիր:

Թե՛ւ յաճախ ես լսել, բայց էլի կրկնում եմ՝ ձեռքերը հարկաւոր է յաճախ լանալ եւ լաւ չորացնել՝

ա- Ամեն անգամ փողոցից տուն վերադառնալիս

բ- Ուտելուց առաջ

գ- Թոյլ տուր յիշեցնել. պարտադիր է՝ զուգարան գնալուց յետոյ:

Կան երեխաներ, որոնք կրծում են իրենց եղունգները: Դա զգելի է եւ առողջութեանը վնասակար: Օգնիր նրանց խորհուրդով: Որեւէ դառնահամ կամ կծու բանով թող թրջեն իրենց մատների ծայրերը: Երկու-երեք օրից խարտոցով արդէն կարող են կարգի բերել եղունգները:



Հանելուկներ

Իր ձեւը անշարժ
Նա միշտ պահում է,

ճնճոմսՆսրկ

Բայց մեծացնում է
Ինչ պատահում է:


Իր ամեն օրայ
Ճամփով գնում է,
Դու արթնանում ես

Իսկ նա քնում է:

ցվուսյ

Ստուգիր յիշողութիւնդ




Մի պահ ուշադիր նայիր այս պատկերին, յիշիր նկատի առնւած դաստորութիւնը, յետոյ շրջիր թերթը, եւ



աշխատիր յիշողութեանդ յենելով վերանկարել այն:

☆☆☆

1-5 թերթ տեղադրէք իւրաքանչիւր շրջանակում այնպէս, որ երեք շրջանակներում երեք թերթի գունաւոր հաւասար լինի 10-ի՝ առաջին պատկերում, 8-ի՝ երկրորդ, 9-ի՝ երրորդ պատկերներում: ■



Բերանի քաղցկեղի ռիսկի գնահատումը



*Չոնգ Դափքինգ բժշկական նամականի.
Առողջութիւն 50 տարեկանից յետոյ
Թարգմ. Լեւոն Ահարոնեան*

Անցնող մէկ տարւայ ընթացքում ԱՄՆ-ում յայտնաբերել է բերանի քաղցկեղի 30,000 նոր դէպքեր, որից 8,000-ը մահացու: Բերանի խոռոչի քաղցկեղը, քանակի տեսակէտից, աշխարհում գրաւում է 6-րդ տեղը չարորակ հիւանդութիւնների շարքում: Անելի քան ողբալի է, որ հնարատր էր փրկել գրեթէ այդ բոլոր մահերը, եթէ նրանք որդեգրէին կեանքի որոշակի ապրելակերպ: Հարկ է նշել, որ բժշկին եւ ատամնաբոյժին տւած պարբերական այցելութիւնները նպաստում են վաղաժամ յայտնաբերման- ուստի եւ նախնական, բուժելի փուլում գտնուող հիւանդութեան բուժմանը ձեռնամուխ լինելուն: Այդուհանդերձ, 40-ն անց տարիք ունեցողների վրայ կատարւած մի հարցադրումից պարզել է, որ հարցադրւածների լոկ 15 առ հարիւրն է, որ երբեւէ ենթարկւել է բերանի քաղցկեղի ստուգողական քննութեան:

Մասնագէտները խորհուրդ են տալիս, որ մարդիկ կատարեն բերանի խոռոչի յաճախակի ինքնագնումներ, առաւելաբար, եթէ կանգնած են յաւելեալ ռիսկի դիմաց:

Ռ՞վ է առաւել խելացի

Բերանի քաղցկեղն կարող է առաջանալ բերանի խոռոչի որեւէ մասում, ներառեալ շրթերը, այտերի ներքին մակերեսը, լինդերը, քիւմքը:

Բերանի քաղցկեղի գլխատր պատճառներն են՝

Ծխախոտի գործածութիւնը- Բերանի չարորակ ախտահատումները 6 անգամ աւելի հաւանական են ծխողների համար, քան ոչ-ծխողների: Ծխախոտաբոյս ծամելը այդ ռիսկը յիսնապատկում է:

Շատ ալկոլ սպառելը- Բերանի քաղցկեղով հիւանդների երեք քառորդ մասը կազմում են չափից աւելի ալկոլ սպառողները, իսկ ծխախոտի եւ ալկոլի միատեղ սպառումը խթանում է քաղցկեղի ռիսկը աւելի քան դրանցից իւրաքանչիւրին առանձին վերցրած:

Երկար ժամանակ արեւի լոյսի տակ յայտնուելը- Գերմանիշակագոյն (ultra violet) շողարկումը (որը արեւի ճառագայթների բաղադրիչ մասերից է) գարկ է տալիս բերանի քաղցկեղի առաջացմանը, որի դէպքերի մօտաւորապէս մէկ երրորդը տեսնում է բացօթեայ աշխատանք ունեցողների մօտ:

Տարիքն ու արական սեռին պատկանելութիւնը- Բերանի քաղցկեղի պատահականութիւնը (incidence) զգալիօրէն սրբում է 40 տարեկանից յետոյ եւ տղամարդիկ աւելի են խոցելի քան կանայք, որի հաւանական պատճառը երկու սեռերի կենցաղային սովորոյթների միջոյն եղած տարբերութիւնն է:

Անկատար լազանք եւ լաւ չյարմարող կեղծ ատամնաշարերն, որ ծխախոտաբոյս, ալկոլ կամ այլ վնասակար նիւթեր են պահում իրենց մէջ, ու նաեւ անբարար սննդառումը, ինչպէս օրինակ՝ մասնաւորաբար վիտամին E-ի պակասը, նշանակալի դեր ունեն այս խնդրում:

Նախագուշակական քայլեր

Բերանի քաղցկեղը կանխելու ամենալաւ միջոցը ռիսկային ազդակներից են հեռու մնալն է: Ուսումնասիրութիւնները ցոյց են տւել, որ ծխախոտաբոյսային արտադրանքների ըսպառման կրճատումը- նոյնիսկ տարիներ շարունակ օգտա-

գործելուց յետոյ- եւ ալկոլի սպառման սահմանափակումը, նկատելիօրէն իջեցնում են բերանի բոլոր տեսակ քաղցկեղի ռիսկը: Բացի այդ միջօրէի արեւ-ից խուսափելն (երբ ուժեղագոյնն է գերմանիշակագոյն շողարկումը) եւ ընդհանրապէս արեւից պաշտպանելը նպաստում են շրթերի քաղցկեղի կանխմանը:

Նմանապէս, պաշտպանողական յատկութիւն ունի հաւասարակշռւած սննդակարգը, որը հարուստ լինի բուսաթելով (fibre) եւ պարունակի քիչ ճարպ: Նման մի սննդակարգ պիտի ընդգրկի օրական հինգ բաժին թարմ պտուղ եւ բանջարեղէն, օր՝ լոյիկ եւ գազար (որոնք վիտամին E-ի հարուստ աղբիւրներ են): Արհեստական ատամնաշարը դուրս պիտի բերի գիշերը եւ մաքրի ամբողջապէս, իսկ ցերեկը՝ ողորկի մի քանի անգամ ու ստուգի դրա լինդերի վրայ յարմարաւէտ նստելը:

Ազդարարող նշաններ

Բերանի քաղցկեղի վաղահաս յայտնաբերումը եւ բուժմանը ձեռնամուխ լինելը մեծապէս նպաստում է հիւանդութեան դրական հետագայ ընթացքին:

Մի հետազօտութեան արդիւնքում պարզ է դարձել, որ երբ ախտորոշումը կատարւում է աւշահանգոյցներում քաղցկեղի տարածումից առաջ, ենթակաների 64 առ հարիւրը կենդանի է մնում ախտորոշման քականից 5 տարի անց, համեմատուած լոկ 15 առ հարիւրի հետ, երբ տարածւելուց յետոյ է ախտորոշում կատարւում:

Բերանի պարբերական ինքնաստուգումը գումարած մասնագէտի կողմից տարին մէկ անգամ քննութիւնը, լաւագոյն ուղին է բուժման ազդեցութեան պոտենցիալը բարձրացնելու առումով:

Անձամբ ստուգումը կատարել հայելու օգնութեամբ եւ զննել շուրթերը, լինդերը, այտերի ներքին մակերեսը, լեզուն, կոկորդի խորքային մասը, բերանի յատակը եւ քիւմքը: Խոցւածքներ նշմարելու դէպքում- ի մասնաւորի դիւրաւ արհիւնալ եւ գունափոխութիւն պատճառող խոցեր- անբացատրելի կոշտութիւններ, կծկում (էրոզիա) կամ թուլացած ատամներ անյապաղ դիմեցէք բժշկին կամ ատամնաբոյժին: Բերանի ցաւ, որ արագ չի վերանում, կամ յամառող կոկորդատաս, զգալ ինչ-որ քան կաշել է կոկորդում, ծամելու, կուլ տալու խանգարումներ ու նոյնիսկ լեզուի շարժումների կաշկանդում՝ նոյնպէս կարօտում են մասնագէտի հետ խորհրդակցութեան:

Ախտորոշումից յետոյ

Ապրելակերպի մէջ փոփոխութիւններ մտցնելը նոյնչափ կարեւոր է ինչպէս ախտորոշումից առաջ, այնպէս էլ ախտորոշումից յետոյ, թերեւս առաւել կարեւոր է՝ յետոյ: Ռոպէս օրինակ, կարելի է նշել, որ բուժման արարաից յետոյ ծխելը դադարեցնողների միայն 6 առ հարիւրն է, որ նորովի ախտահարւում է գլխի կամ վզի քաղցկեղով, համեմատուած ծղխելը շարունակողների 40 առ հարիւրի հետ:

Հիմնականում բուժումը կայանում է ուռի (tumor) եւ շրջակայ առողջ հիւսկէի մի փոքրիկ մասի վիրահատումի մէջ: Քեմոտերապիան եւ շողարկումները, որ կատարւում են վիրահատումից առաջ կարող են օգտակար լինել ուռի կծկելու, քաշելու առումով, իսկ յետոյ՝ ոչնչացնելու համար քաղցկեղային այն բջիջները, որ վայրում մնացել են գործողութիւնից յետոյ: Կարելի է նաեւ վիրահատել ուռին մօտիկ գտնուող ա-

Առողջապահական

շահանգոյցները, ճշտելու թէ արդեօք տարածա՞ծ է եղել քաղցկեղը:

Որոշակի քաղցկեղների դեպքում, ինչպէս օրինակ՝ ծնօտի, լեզւի կամ քիմքի, յաճախ կարելի է լինում վերցնել ոսկորի կամ մկանունքի մի մաս: Եւ, քանի որ այդ ընթացքը երբեմն պատճառ է դառնում մարմնի որեւէ մասի այլափոխման վերաբերեալ, անհրաժեշտ է լինում կատարել վերականգնողական վիրահատութիւն: Նման պարագաներում ենթակային պիտի սովորեցնել ատամների պրոտեզի ճիշտ գործածութեան ձեւը, իսկ հարկ եղած դեպքում նաեւ խօսելու մարզումներ տալ նրան:

Մանրածաւալ վիրահատման տեխնոլոգիան- բիոպսիա-որով վերցում է հիսկէի մի բարակ շերտ, շրթունքի քաղցկեղի վիրահատմանը առնչող անցանկալի էստետիկական հետեւանքները կարող է հասցնել նազագոյնի: ■

Յիսուսը... Ծար. էջ 13-ից

Յետոյ վեց տարի նա ճամբորդում էր սուրբ վայրերը, ինչպէս՝ Ռաջէգրիս, Բենարէս եւ այլն... Եւ եկաւ Կապիլավասթո: Բուրդաստ վանականների հետ վեց տարի նա կարողաց Բուրդաստ վանականների հետ լինելու: Այնտեղից նա ճամբորդեց դէպի Նեպալ եւ Հիմալայա եւ վերադարձաւ Պարսկաստան: Նա որ արդէն 30 տարեկան էր, վերադարձաւ իր իսկ երկիրը եւ սկսեց քարոզել խաղաղութեան պատգամը եւ լաւ ցանկութիւններ մտղթել իր ճնշուած ազգականներին:

Որդի Աստծոյ

Յիսուսը լաւ յարաբերութիւն ունէր Վեդաների հետ: Նա ունէր ամեն արդարադատութիւն՝ բացատրելու ինքն իրեն՝ «Աստծոյ որդի» ներկայացնելու:

Վինգիլիտասի անմատչելի մասերում մի բաժին կայ, որ Սաղիսուական լեզուով կոչուում է «Նաթիա Եօզա»: Նըրանք ձեռք են բերում մի ձեռագիր, որ կոչուում է «Նաթիա նամակալի»: Այս ձեռագրում յայտնաբերել է հետեւեալը.- Յիսուսը եկաւ Հնդկաստան 14 տարեկանում եւ 16 երկար տարիներից յետոյ, աղօթող կարող էր տեսնել Շիւային՝ Մեծ Աստծուն: Դրանից յետոյ նա գնաց իր ծննդավայրը եւ սկսեց խօսել Աստծու մասին իր համաերկրացիների մէջ, բայց իր համաերկրացիներից շատերը միտքապաշտ բնատրութիւն ունէին եւ չէին կարող պաշտպանել այս լոյս գիտութիւնը: Սկսեց դաւադրութիւնը, տանջեցին նրան մեխեր գամելով նրա ձեռքերին եւ ոտքերին: Երբ Իսհայնաթը խաչուած էր՝ իր հոգեւորականներից մէկը, մեծ Չէթան Նաթը, խորը մտախոհութեան մէջ էր՝ Հիմալայայի մօտակայ շրջակայքում: Երեք օրում նա խաչուեց իսրայէլցիների երկրում: Այստեղ, մի անտառում, նա ստանձնեց իր իսկ կերպարը:

Դա մի անխաղաղ օր էր, երկինքը թնդում եւ շարպի էր տեղում, որովհետեւ Աստուածները շատ բարկացած էին եւ Աշխարհը ցնցեց:

Վերադարձ դէպի Հնդկաստան

Դրանից յետոյ նրանք, երկուսն էլ վերադարձան Արիական Սուրբ երկիրը եւ հաստատուեցին Մաթիա, Հիմալայա Ներքեւի շրջանում: Վերջում, այնտեղում, երեք օրայ մտախոհութիւնից եւ պաշտամունքից, բոլոր ողորմած Ծանկարան գթութեամբ կրկին տեսաւ նրան եւ խնդրեց, որ Իսհայնաթը բացատրի Աշխահին՝ բոլոր ստեղծական

խորհուրդները: Յետոյ Սուրբ մարդիկ ամեն տեղից եկան յայտնելու իրենց յարգանքը նրան: «Նաթիա Նամաւալի»-ի ձեռագիրը թէն հազարապատ է, նաեւ անձեռնամարտելի բայց, ոչ առասպել: Եւ ինքս վերջերս տեսել եմ մի պատճեն եւ ի վերջոյ Կրիշնա Գօսամին եւս ունէր առիթը՝ կարդալու մի պատճենը: Գիրքը կարելի է գտնել Սանեասիօ Նաթիա Եօզի քովինթի մօտ, որը ընդգրկում է 17-ից արեւի մեծ մարդկանց կենսագրականները:

Խմելու Տեղ

«Թարիխս էլ Ազհան» արաբական գրքում մենք գտնում ենք, որ ամեն տարի, Քայթարի վերջին քականին, մէկ Շիւա Պուջահ պահում է մի տեղում, որ կոչուում է «Իշա-Թալա»՝ Քէշմիրի եւ աֆղանստանի սահմանագծի վրայ: Մի մեծ գեղեցկութիւն է պահում այստեղ, այս հանգոյցում, դա քանդակած մի տեղում, որտեղ աշխատութիւնը Յիսուս-Քրիստոսը մի անգամ յագեցրել է իր ծարաւը՝ ջուր խմելով այս Իշա Թալա քարկղից: Ռաբլեզի իր հետեւորդները կարողանան նոյնիսկ բարձր տարիքում իրենց Սուրբ յիշատակին յարգանք մատուցել, այստեղ հանդիպում են միմեանց եւ խօսում են նրա արժէքների եւ բարեգործական գործունեութեան ու բարութեան մասին: Բիարմա Պուջահի Նօթիա Եօզիի կողմնակիցները երգում են մի բարի երգ, որ կոչուում է «Եօզիների երգը»: Այս երգը, թէն այժմ գրեթէ մոռած է, բայց դեռ լսում է որոշ մասերը Ռաջշահի Դիւիթընի որոշ մասերում: Այդ երգը երգում են հասարակ մահկանացու հինդուներն եւ Մահմեդականները: Գտնել են մի քանի տող, որոնցից պարզուում է Յիսուսի Եօզի համայնքում լինելը:

- Իմ ընկեր, Ի՞նչ երկիր է գնացել Իշային (Յիսուսը) ու մեր Յովհաննէսը:

-Իմ ընկեր, որտե՞ղ է ձեր Գուրունների Գուրուն, եւ որտե՞ղ է ստում ձեր միտքը:

-Իմ ընկեր, Յիսուսը գնացել է դէպի Արաբիա, Յովհաննէսը՝ դէպի Եգիպտոս:

-Իմ ընկեր, Յիսուսն, մեր Գուրուններիս Գուրուն է, մի Եօզիսի միտք մնում է Եօզայի վրայ միայն:

«Մաթիա Նամակալին եւս հաստատում է այս տեսութիւնը: Դր. Նօթովիչի «Յիսուսի անձնագիր անունը» Նաթիա Իզի-ի համայնքի զարգացումը եւս հաստատում է: Գիրքը կողմնակի ասում է մեզ, որ Յիսուսը բարձր մակարդակի Եօզի էր: ■

Մաջրառ համար 21-ի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	է	զ	ա	գ	ն	ո	ք	ու	դ	ա	յ	ե	ց	ի	
2	դ	ո	ժ	ա	ն	ք		ա	դ	ա	դ	ա	կ		ր
3	զ	ա		ի	ք		ա	ն	ի	ր	ա	վ		դ	օ
4	ա	լ	ե	ր	ե	լ		ք		ա	լ	ի	լ	ու	ք
5	ր		լ		լ	ա	կ		ու	դ		տ		ք	
6	դ	ա	ք	ա		լ	ի	ա	ն	ա	լ		ա	ս	ք
7	ե	լ	ու	զ	ա	կ		կ	ե	ն	ց	ա	դ		ա
8	զ	ա	ճ	ա	ճ	ա	յ	ի	ն		ն	շ	տ	ա	ր
9	ա	բ	ա	ր		ն	ու	շ		կ	ե	ն	ո	դ	
10		ա	ր	ի	ն		շ		պ	ա	լ	ա	տ		ք
11	ա	ճ		ո	ր	դ		ա	ս	տ		ն	ու	ն	է
12	ճ	ա	ս	ն	ա	լ	ո	ր		ա	կ	ա	ճ	ա	յ
13	ա		ո		ն	ի	ս	տ	ա	կ	ա	ց		ն	ն
14	յ	ու	դ	ա		ն	կ	ա	ր		ք	ա	փ		ի
15	ի	ճ	ա	ս	տ		ի	զ	ու	ր		ն	ե	ր	կ

Ժամանց

Խոհարարական հնարամտություններ



Որպեսզի թարմ բանջարեղենը պահպանի մինչև նոր տարի, անհրաժեշտ է, պոմիդորը քաղել տաք, չոր, արեւային օրայ երկրորդ կեսին: Ամուր, առողջ, մի չափի պլաստիկ դարսել ապակե մեծ բանկայում եւ լցնել եռացրած ու սառեցրած աղաջուր: Բանկան կապել պոլիէթիլենային թաղանթով եւ պահել չոր նկուղում: Աղաջուրը փոխել իրաքանչիւր երկու շաբաթը մէկ անգամ:

Աշնանը կարելի է հաւաքել կանաչ, առողջ պտուղները եւ ամէն հատը փաթաթել թղթով, դնել ծղոտով լցած անարկղի կամ կոդոնի մէջ եւ պահել մութ տեղում 11-13 աստիճան զոռոյից բարձր ջերմաստիճանում:

Ամուր, համաչափ վարունգները քաղել պտղակոթերի հետ, լրանալ եռացրած- հովացրած ջրով, փափուկ սրբիչով չորացնել եւ խնամքով քսել ձիւ թարմ սպիտակուց: Մի ծայրը պտղակոթից ամուր թելով ամրացնել եւ կախել մեխից կամ պարանից այնպէս, որ վարունգները իրար չըկըպչեն, այլ օդում ազատ կախուած լինեն: Պահել չոր, սառնատուն տեղ:

Եթէ մուրաբայի եփելու ժամանակ աւելացի մի քիչ լիմոնի (կիտրոնի) հիւթ, նա չի շաքարակալի:

Որպեսզի կիսելի մակերեսային թաղանթ չառաջանայ, անհրաժեշտ է նրա վրայ բարակ թաղանթով շաքարաւազ ցանել:

Բանջարեղենի խաշելիս այն լցրէք ոչ թէ սառը, այլ եռացրած ջրի մէջ: Այդպէս վիտամինները երկար են պահպանուում: Վիտամինների մեծ մասը փոխանցուում է եփուկին, դրա համար այն մի թափէք, աշխատէք օգտագործել սուպերի կամ պատրաստման համար:



Յաղթողները եւ պարտուողները

*Ա.Ջ. Շարիս
Թարգմանեց Գագիկ Անդրեասեանը*

Յաղթողը իրեն յաղթանակի միակ տէրն է համարում: Պարտուողը խոստում է տալիս:

Երբ յաղթողն է վրիպում , ասում է. «սխալւեցի»: Իսկ պարտուողը վրիպելու դէպքում ասում է.«Իմ յանցանքը չէ»:

Յաղթողը անելի շատ է աշխատում եւ ժամանակի պակասը չի գտնում:

Իսկ պարտուողը միշտ «այնքան զբաղուած» է, որ ժամանակ չի գտնում անհրաժեշտ աշխատանքները իրագործել:

Յաղթողի սարսափը պարտուելուց այնքան շատ չէ, որքան պարտուողի ներքուստ սարսափը յաղթելուց:

Կատակը կեանքի ուրախ եռակն է



Հումոր

Դատաւորը.

-Դուք պնդում էք, որ ձեր ամուսինը, որը հիմա մի կերպ կանգնած է յենափայտերի վրայ, ձեզ ծեծի է ենթարկել:

-Գիտէք, այն ժամանակ, երբ նա ինձ ծեծում էր, դեռ յենափայտերով չէր:

-Ասացէք խնդրեմ, դուք ապտակե՞լ էք այս տղամարդուն,- դատաւորը հարցնում է կնոջը:

-Ո՛չ:

-Նա ստում է,- բղաւում է տղամարդը:

-Չայնդ կտրի՞ր, թէ չէ մի անգամ էլ կը ստանաս:

-Չեր մօտ սառը զէնք կա՞յ:

-Ի՞նչ իմանամ, ես նրա վրայ ջերմաչափ չեմ ամրացրել:

-Ինչի՞ համար են ձեզ դատել:

Պատկերացնում էք, մի անգամ պարզուեց, որ պետութիւնը թողարկում է նոյնատիպ դրամանիշ, ինչպիսի ես:

Մեքենան հարածելով հետիոտին կոտորում է նրա ոտը:

Որպէս հատուցում դատարանում հետիոտը պահանջում է մէկ միլիոն դրամ:

-Չեզ երեւի թում է, որ ես միլիոնատէ՞ր եմ:

-Իսկ ձեզ ի՞նչ է թում, ես քառասուն ոտանի եմ:

Դատապարտեալը.

-Խնդրում եմ հետաձգել դատը, քանի որ իմ դատապաշտպանը՝ դեռ չի եկել:

Դատաւորը.

-Ոտիկանը ձեզ ձերբակալել է այն պահին, երբ ձեր ձեռքը արդէն ուրիշի գրպանում էր: Դրան ի՞նչ կարող է աւելացնել դատապաշտպանը:

-Ճիշտն ասած, ինձ նոյնպէս դա է հետաքրքրում:

-Շարքային, դուք այսօր սափուրե՞լ էք:

-Այո:

-Յաջորդ անգամ սափուրելուց սրիչի մօտիկ կը կանգնէք:

Գնդապետը գնում է ծառայողական մեքենայով:

Գիմացը, ցեխերի մէջ բեռնատար մեքենայ է թաղուած: Ոչ մի հնար չկայ նրան անցնելու:

Մտիպուած գնդապետը իր վարորդի հետ իջնում են եւ սկսում հրել մեքենան: Երկար չարչարելուց յետոյ մեքենան դուրս է գալիս ցեխից: Քրտինքի մէջ կորած գնդապետը դիմում է բեռնատարի վարորդին:

-Այո,- բաւականին ծանր է քո մեքենան:

-Իհարկէ ծանր է,- ասում է վարորդը,- չէ որ մեքենայում քսան «դեմքեր» են նստած: ■

Ժամանց

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 22

Կազմեց
Գագիկ Անդրեասեանը

ՇՈՐԻՋՈՆԱԿԱՆ

1. Խոշոր կազմաձևով, բարձրահասակ-անբնակ, անշէն:
2. Արական անուն- Աստուածային:
3. 1918թ. մայիսեան հերոսամարտերի վայրերից մէկը- նռան ծառ (բարբառային):
4. Թրով կտրտել- խիստ բարձր քարէ կառուցածք ամրոցների պարիսպների անկիւններում շրջագայքը հսկելու համար:
5. Քրիստոնէական մի աղանդի հետեւող, որը քարոզում է կամաւոր մկրտութիւն՝ հասունացած տարիքում- գոյութիւն ունի:
6. Լուծը կրող, լծկան- երկինջիւն է- տարի-անաւարտ գահ:
7. Կերակրի համեմններից- սպասարկել, ծառայել մէկին:
8. Երկինջիւն է- էլեկտրոնիկ քարթ-կոնքածէս սանդ՝ ձիթապտուղը հեղկելու համար:
9. Նա դերանուան հոլովներից- պատ- ծանրութեան ճնշման տակ կամ յոգնելուց հառաչել:
10. Մի տեսակ թռչուն- խառն ծանր- ժողովրդական բարբառով հորեղբայր է նշանակում:
11. Երկինջիւն է- երկայնածէս կամ բոլորակ փոքր բլուր- դրացի:
12. Նիզակի ծայրի սուր երկաթը (ուղղագրական սխալով)- արեւմտահայ յայտնի բանաստեղծ, բուն անունով՝ Ատուր Շարճանեան, որը զոհեց Մեծ Եղեռնի ընթացքի-անաւարտ տաղ:
13. Մարմնի մարտական գործարանի մասնիկներից- ուրիշին բարութիւն չկամեցող- մէկ:
14. Շատ կարճ ժամանակ տեւող- մետաղեայ կոթաւոր ոչ խորունկ կլոր աման ուտելիքը տապակելու համար:
15. Աֆրիկայի Գանա երկրի մայրաքաղաքը- լարը կտրող:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1										■					
2				■		■									
3											■				
4							■								■
5		■								■				■	
6							■						■		
7	■		■			■									
8			■					■							■
9				■				■		■					
10						■					■	■			
11			■					■							
12				■									■		
13					■	■				■		■			■
14		■									■				
15	■					■									■

ԼՈՒԾԵՔ
ԽԱՉԲԱՌԸ

ՍՏԱՑԵ
ՄԷՐ

ՈՒՂԱՇԱՅԵԱՑ

1. Ընկճել, պարտել- թերի:
2. Ինչ-որ երկիրն արդիւնաբերում, ստեղծում է- չափազանց, չափից դուրս:
3. Հայոց արծաթայինը- մակերեսի չափելու միաւոր- մարդկային հոգու սնունդը:
4. Կարող, ընդունակ- թանկագին քար- մարմնի մի տեսակ արեղիայից ստեղծած:
5. Հոգեւորական տիտղոս- անաւարտ պատ:
6. Խառն լիտր- մակերեսի չափելու միաւոր- յայտնի փիլիսոփաներից:
7. Առաջին կաթը, որը գոյանում է կնոջ ստիճներում ծննդաբերելուց անմիջապէս յետոյ- բոյսի մատաղ ոստ, որը կտրում ու տնկում են հողում, արմատ ձգելու համար:
8. Վտանգի ժամանակ ինքն իրեն չկորցնող, արտոտ- իբրեւ նախադաս մասնիկ կազմում է բազմաթիւ բառեր վերա... նշանակութեամբ:
9. Բնագաւառ- ինչ որ հաշիւ չունի, չհաշւած:
10. Խառն արտ- տարի- արական անուն (օտար)- ցուցական դերանուն:
11. Ակն- թակարդ՝ մկներ, թռչուններ եւ այլն որսալու համար- խառն երթ:
12. Լիակատար, անթերի- երկինջիւն է- անաւարտ թաղ:
13. Ատամ- մի տեսակ թռչուն- ձեռքերի եւ ոտքերի ծայրամաս:
14. Պատշաճ, վայելուչ- բարձրագոյն պատուի արժանի:
15. «Ի» տառի անունը- մի տեսակ պտուղ- իգական անուն- յաւելում:

Խաչբառ համար 21-ի
լուծած տարբերակը
տեսնել՝ էջ 18-ում:

Մարզական

Էջեր մարզաձեւերի պատմութիւնից

Բասկետբոլ

Բասկետբոլի հայրենիքը գրտներու համար նախ անհրաժեշտ է անցնել ովկիանոսը, մտնել հին Մեքսիկա եւ թերթել օրացոյցի թերթիկները այնքան ժամանակ, մինչեւ կը հասնենք ացտեկների հզօր պետութեանը, որի կայսրն էր Մոնթեուման:



Ացտեկների մայրաքաղաք Տենոչտիտլանում մեծ յարգանք էր վայելում սպորտը. մինչեւ այսօր էլ պահպանել են հսկայական ստադիոնների փլատակներ, որտեղ անց են կացնել սպորտային միջոցառումներ: Տենոչտիտլանում ամենամասսայական մարզական խաղը տլատչիլն էր. երկու թիւներ աշխատում էին ծանր կաուչուկի գնդակը զցել քարէ օղակը, որն ամբացած էր բարձր պատի վրայ: Ինքը, Մոնթեուման եւս մասնակցում էր այդ մրցումներին: Ահա հեց այս տըլատչիլին էլ բասկետբոլի նախապայսն է. անտիկ աշխարհի հրապուրիչ մարզաձեւերից մէկը:

Ժամանակակից բասկետբոլը եւս «ծնել» է ովկիանոսից այն կողմ՝ Ամերիկայում: Ճիշտ է, այն այնքան էլ հին կենսագրութիւն չունի. ծնել է անցած դարաշրջանի վերջին: Խաղի գիտարարը՝ հայրը, համարում է Մասսաչուսետս նահանգի Սպրիգֆիլդսի քոլէջի անատոմիայի եւ Ֆիզիոլոգիայի ուսուցիչ, դոկտոր Ջէյմս Նէյսմիքը: Նէյսմիքի նպատակն էր ստեղծել մի խաղ, որը աւելի մասսայականութիւն վայելէր եւ երկրորդ պլան մղէր վտանգաւոր ամերիկեան Ֆուտբոլին:

...Բասկետբոլի առաջին հանդիպումը անց է կացել 1891 թականին, Սպրիգֆիլդսի քոլէջի մարզադահլիճում: Յայտնի է նաեւ այն մարդը, որը խաղն անանց «Բասկետբոլ»: Դա Մեզան է, առաջին հանդիպման հանդիսատեսներից մէկը, որը պարզապէս, կատակի համար միացրեց երկու բառ. «բասկետ»(զամբիւղ) եւ «բոլ» (գնդակ):

Խաղը մեծ մասսայականութիւն վայելեց Ամերիկայի Միացեալ Նահանգներում եւ յատկապէս ուսանողների շրջանում: Դա էլ նպաստեց, որպէսզի շատ կարճ ժամանակամիջոցում խաղը դուրս գայ իր ծննդավայրից: Ամերիկեան ինստիտուտներում եւ քոլէջներում սովորող օտարերկրացի ուսանողները, վերադառնալով հայրենիք, իրենց հայրենակիցներին ծանօթացնում էին նոր խաղին:

Խաղի մասսայականացմանը նպաստեց նաեւ 1904 թականին Սենտ-Լուիսում անցկացւած երրորդ օլիմպիական խաղերը: Մարզական այդ խոշոր տօնահանդէսի օրերին ամերիկացիները անցկացրեցին ցուցադրական հանդիպումներ: Խաղը դուր եկաւ բոլորին, եւ սկսեցին հետաքրքրել նրանով:

Մակայն, բասկետբոլը օլիմպիական քաղաքացիութիւն ստացաւ միայն երեսուներկու տարի անց, 1936 թականին, Բեռլինում: Օլիմպիական անդրանիկ մրցաշարին ներկայ էր նաեւ 75-ամեայ Ջէյմս Նէյսմիքը, որն էլ ոսկէ

պարգևներ յանձնեց յաղթող թիմին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների հաւաքականին:

Այն ժամանակից, երբ առաջին գնդակը ընկաւ մրգի զամբիւղի մէջ, բասկետբոլը համաշխարհային մասսայականութիւն է ձեռք բերել: Այսօր այդ խաղով զբաղւում են հարիւր միլիոնից աւելին մարդ, իսկ բասկետբոլի միջազգային Ֆեդերացիայի կազմում ընդգրկւել են 150-ից աւելի երկրներ:

Բասկետբոլը, ինչպէս գիտեք, հսկաների խաղ է: Նախկին ԽՄ հաւաքականում ռեկորդային հասակներ ունեն Սերգէյ Կովալենկօն եւ Վլադիմիր Անդրէեւը՝ 216 սանտիմետր: Մակայն ամենաբարձրահասակը, որը երբեւէ խաղացել է ԽՄ հաւաքականում, դա Ուվայս Ախտունն է, որի հասակը 236 սանտիմետր էր: Մակայն այս հարցում եւս կանայք առաջ են անցել տղամարդկանցից: Մի քանի տարի առաջ ամերիկեան Նիւ Օռլէան քաղաքի հաւաքականում էր խաղում 14-ամեայ սեւամորթ Դուրրես Պելլարդը, որի հասակը 250 սանտիմետր էր:

Ինչ խօսք, բասկետբոլում միայն բարձրահասակներով հնարաւոր չէ յաղթանակ տանել: Անհրաժեշտ են նաեւ «փոքրիկներ». արագ եւ ճիշտ փոխանցումներ, կայծակնային կոմբինացիաներ կատարելու համար: «Փոքրիկների» մէջ եւս եղել են եւ կան նշանաւոր վարպետներ. ամերիկացի Բիլ Կոուսին, հարաւաւաւացի Իւօ Դանելուն, Եւրոպայի չեմպիոն, երեսանցի Վիտալի Չաստուխովը, նախկին ԽՄ ութակի, Եւրոպայի քառակի չեմպիոն Արմենակ Ալաջաջեան, որոնք ոչ միայն միջախասակ, այլեւ աւելի ցածր հասակի տէր մարդիկ են եղել:

Նետաձգութիւն



1972 թականին միւնխենեան օլիմպիադայում գնդակային եւ ստեղծարարական հրաձգութեան հետ հաւասար կրակազիծ դուրս եկաւ նաեւ նետաձգութիւնը: Մակայն նորեկը առաջին անգամ չէր, որ մասնակցում էր օլիմպիական ճակատամարտերին:

1900 թականին, Փարիզի օլիմպիական խաղերում, նետաձիգները հանդէս եկան ցուցադրական ելոյթներով, իսկ չորս տարի անց, Սենտ-Լուիսի, 1908 թականին Լոնդոնի եւ 1920 թականին Անտուերպենի օլիմպիական խաղերում նրանք իրրեւ հաւասարներ վիճարկեցին օլիմպիական դասիները: Այս, այդ ամենահնագոյն եւ ռոմանտիկ մարզաձեւը մոռացութեան մատնեց:

1957 թականին չեխ մարզիկները Մոսկայում ցուցադրեցին իրենց վարպետութիւնն այդ մարզաձեւում, իսկ նրանց մէկնելուց յետոյ նետաձգութեան սիրահարներ գտնուեցին նաեւ ԽՄ, որոնց բանակը զնալով աւելի ու աւելի սուսարացաւ:

Այս մարզաձեւը այնքան էլ չի հրապուրել հայ մարզիկ-ուիիներին: ■

Երիտասարդի համար

Ինչպես են առաջացել այս տեղանունները

Կամսար Աւետիսեան

Մարդիկ դեռ վաղ քաղաքակրթութեան ժամանակներից միշտ էլ հետաքրքրուել են աշխարհագրական անունների առաջացմամբ: Դեռեւս հին յոյները ուշադրութիւն են դարձրել այդ հարցին: Այս գիտութեան անւանումը, որը տապոնիմիկա է կոչուում, գալիս է յունարեմից: Հինքում ընկած են տապոս (տեղ) եւ օնիմա (անուն) բառերը:



Այսպիսով, տապոնիմիկան ուսումնասիրում է առանձին երկրների, բնակավայրերի, գետերի, ծովերի եւ այլ անունների ծագման պատմութիւնը:

Ի վերջոյ, սերունդներին անցեալից ժառանգութիւն մնացած այս կամ այն տեղանունը ուշադիր ուսումնասիրութեան դէպքում շատ բան կարող է պատմել տեւալ երկրի, ժողովրդի պատմութիւնից:

Ծանօթանանք մի քանի, այսպէս ասած, դասական տեղանունների առաջացման պատմութեանը: Ինչպիսիք են՝ Յունաստան, Պարսկաստան, Ֆրանսիա, Պորտուգալիա, Հրեկաստան, Հայաստան, Հայք եւ Արմենիա:

Սկսենք Յունաստան տեղանունից:

Յոնիա-Յունաստան



Պատմական անցեալում, մօտաւորապէս երեք հազար տարի առաջ, Բալկանեան թերակղզու հարաւում, Փոքր Ասիա թերակղզու հարաւ-արեւմտեան մասում, ինչպէս նաեւ Էգէյեան ծովում գլտ-մտղ կղզիներում պատմութեան ասպարեզ ելաւ մի շատ խելացի եւ գեղեցիկ ժողովուրդ, որը յայտնի դարձաւ *հելլէներ* կամ *յոյներ* անունով:

Յոյն ժողովրդի ձեւաւորման գործում մեծ դեր խաղացին հետեւեալ ցեղախումբերը՝ արալացիները, դորիացիները եւ յոնիացիները: Վերջիններս բնակուում էին Փոքր Ասիա թերակղզու հարաւ-արեւ-մըտեան մասում եւ կից կղզիներում, որը յայտնի էր Յոնիա անունով: Դա իրականում հանդիսացել է պատմական Յունաստանի շարունակութիւնը եւ ներգրաւել է հելլէնական քաղաքակրթութեան մէջ: Այդտեղ, ինչպէս նաեւ դրանց հարող կղզիներում, բարձր ծաղկման հասան եւ յունական մշակոյթի լուսապսակ դարձան յոնիական տասներկու քաղաքները, որոնցից մշակութունները եղան՝ Միլէթը, Հալիկամասը եւ Եփեսոսը: Դրանք դարձան ոչ միայն յունական, այլեւ մարդկութեան պատմութեան մշակոյթի հոյակապ կենտրոններ, այդ թւում մատերիալիստական փիլիսոփայութեան ու ճարտարապետութեան օջախներ:

Յոնիան միաժամանակ հանդիսանում էր յունական առեւտրի եւ մշակոյթի կենտրոն: Գիտութեան ասպարեզում աչքի ընկաւ Միլէթը: Որտեղ ապրել ու գործել է յունական «Եօթ իմաստուններից»՝ Թալէսը¹ (Թաղէսը): Յոնիան Լիդիայի միջոցով առեւտրական կապեր էր պահպանում նաեւ պատմական Հայաստանի հետ:

¹ «Եօթ իմաստուններից» ասելով նկատի են ունեցել հին յունական Եօթ անանի փիլիսոփաների՝ Թալէս Միլէթցի, Մոլոն Աթենացի, Զիլոն Լալիդեմոնացի, Պիտտակոս Միտելացի, Բիաս Պրիմացի, Կլեոբոյ Լիմոքսցի, Պերիանդրոս Կորնթոսցի:

Քաղաքներից յայտնի էին՝ Հալիկամասը, որտեղ կառուցեց Մուզոյի դամբարանը, եւ Եփեսոսը՝ իր Արտեմիսի կամ Դիանայի հոյակապ տաճարով: Այս կոթողները դասեցին «Եօթ հրաշալիքների» շարքը:

Այնքանով, որքանով որ հայերը տերիտորիալ տեսակետից աւելի մօտ էին Յոնիային եւ հելլէնական աշխարհի հետ էլ կապուում էին Լիդիայի միջոցով (որը գտնուում էր Փոքր Ասիայի կենտրոնում), ապա ժամանակի ընթացքում «Յոնիա» անուն տակ հայերը նկատի ունէին հելլէնական (յունական) աշխարհը ընդհանրապէս:

Երբ այս երեք ժողովուրդներից, այսինքն արալացիներից, դորիացիներից եւ յոնիացիներից ձեւաւորեց յոյն ժողովուրդը, հայերը շարունակեցին Յոնիա անունը տարածել ողջ Հելլէնական աշխարհի վրայ՝ Յոնիա բառին աւելացնելով պահլաւերէն «ստան» (երկիր) մասնիկը, իսկ յոնիա բառն էլ որոշ ձեւափոխման ենթարկելով առաջացաւ «Յունաստան» անւանումը:

Իրան-Պարսկաստան-Իրան



Իրանը Ասիայի հնագոյն պետութիւններից է, որը գտնուում է Միջին Արեւելքում: Երկար ժամանակ յայտնի էր *Պարսկաստան* անունով: Զնայած նրա բուն՝ վաղեմի անունը եղել է *Իրան*:

Նախ Իրան անուն առաջացման մասին:

Շատ վաղ անցեալից Իրանական բարձրավանդակում բնակութիւն են հաստատել հնդեւրոպական ընտանիքից պատկանող մի շարք ժողովուրդներ, որոնք պատմութիւնից յայտնի են մեդեացիներ, պարթեւներ անունով: Ժամանակի ընթացքում դրանց միաւորումից ձեւաւորեց այն ժողովուրդը, որը յայտնի դարձաւ նախ արիացիներ, ապա արդէն իրանցիներ անունով: Այստեղից էլ նրանց հայրենիքը կոչեց «Իրան»:

Այժմ մի քանի խօսք Պարսկաստան անւանման առաջացման մասին, որը ծագել է *պարս* կամ *Ֆարս* անունից: Այդպէս է կոչել Իրանի հարաւային նահանգներից մէկը, որի կենտրոնը Շիրազ քաղաքն է:

Երկրի այդ մասը Իրանի կեանքում մեծ դեր է խաղացել եւ երկար ժամանակ եղել է իրանական թագաւորութիւնների գահավայրը: Այստեղ էր գտնուում Պերսեպոլիսը, Իրանի հիմնադրյալ մայրաքաղաքը: Արտաքին աշխարհում եւս Ֆարս նահանգը շատ աչքի ընկաւ: Յայտնի է, որ անմահ Թումանեանը Ֆիրդոսուն անունով է Ֆարսի բլրով: Ֆարս նահանգի անունով էլ ժամանակի ընթացքում յայտնի դարձաւ ամբողջ երկիրը: Իսկ պարս կամ Ֆարս անւանմանը աւելացնելով «ստան» մասնիկը, որն ունի *երկրի* նշանակութիւն, ստացեց Պարսկաստան: Այսպէս առաջացաւ Իրան պետութեան երկրորդ անունը, որը դարեր շարունակ երկրի պաշտօնական անունն էր:

Բայց պարսկական կառավարութիւնը 1935թ. մարտի 22-ի շրջաբերականով յայտնեց աշխարհի բոլոր պետութիւններին, որ չեղեալ է յայտարարում անցեալից ժառանգութիւն մնացած երկրին «Պարսկաստան» եւ նրա բնակիչներին՝ «պարսիկ» տրուող ոչ ճիշտ անունները: Յայտնեց, որ Պարսկաստանն այստեղից յայտնի է ինչպէս «Իրան» անունով, իսկ պարսիկները՝ «իրանցիներ»: Այդ ժամանակահատիկ սկսած թէ պաշտօնական գրականութեան մէջ, թէ դիւանագիտական աշխարհում պահպանուում են «Իրան» եւ «իրանցիներ» անունները:

Մակայն Իրանի լեզուն եւ գրականութիւնը արանդոյթի ուժով շարունակուում է կոչել պարսկերէն: Իսկ Պարսկաստանը մնում է այդ երկրի համար որպէս պատմական անուն: ■